



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՐԻՆՅԱՆ

ԿՈՆԽՈՉԱՅԻՆ



391.99

7-26

ՍԱՆԵԼԳԱՍԻ

891-99

7-26

19 NOV 2011

Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ



891-54-32

ԿՈՆԽՈԶԱՅԻՆ

ՍԱԿԵԼ ԳՍՄԻ

ԹԻՖԼԻՍ—1931

29.03.2013

27.421

Ստիսեղամի 1-ին տպարան
Դրանկա № 212:
Պատվեր 135: Տիրած 2000:



43336.63

ՍԱՀԱԿ ԲԻԶԵՆ

Մեր կինո-եքսպեդիցիան տեղավորվել էր գյուղի վերի թաղում: Այս «վերի թաղ» կոչվածը մի ինքնուրույն գյուղ է, թաղված բանջարանոցների և մրգեղենի պարտեզների մեջ, ավելի մոտ հովասուն անտառին:

Այստեղ և՛ տներն են նոր, գրեթե բոլորն էլ կղմինդրե տանիքներով ծածկված, շատերը — յերկհարկանի, և՛ մարդիկ են ավելի ժիր ու աշխույժ, և՛ ջուրն է անխառն, անարատ աղբյուրի, վոր բլթում է քարի տակից: Կաղզուրիչ ու թարմացնող ոգի մասին ավելորդ է խոսել: Այստեղ, սքանչելի բնության ծոցում, ծերունիներ կան, վորոնք չեն հիշում իրենց տարիքը, վոմանք մի դարն անց են կացրել, բայց դեռ կանգնած են հաստատուն վորտների վրա, քայլում են յերիտապարզի նման և... «դերասանություն — դերակատարություն» անում մեր կինոյի համար: Ահա այդ «դերասաններից» մեկն է և Սահակ բիձեն, վոր բոլորել է իննսուն տարին:

Հայտնի չէ, վոր կինոն, յերբ բնության տեսարանների հետ կապված եպիզոդներ է հանում, անհրաժեշտ է վառ արև, անամպ յերկինք: Այս դեռ բավական չէ, նկարահանման ժամանակ, դերակատարի դեմքն

ու կաղմվածքն ավելի պայծառ ու ռելիյեֆ դուրս գալու համար, չորս կողմից նրա վրա յեն գցում հայելիներով ու ճերմակ թիթեղից հատուկ պատրաստված «վահաններով» արևի բեկված ճառագայթները: Վերելից արևն է անխնա վառում, կողքերից նրա բեկված ճառագայթներն են այրում, խորովում, աչքերը ծակում... Դժվար, շատ դժվար է դիմանալը: Բայց մեր ծերունի դերակատարները «խաղում են» ժամերով, կրկնում են միևնույն եպիդորդ մի քանի անգամ, անխռով ու անվրդով... Յերևում է բնության զավակի տոկունությունը, համառ ու անսպառ դիմացկունությունը...

Արևը — զենիթումն է: Սա — անհարմար ժամանակն է նկարահանման. ճառագայթները թեք չեն, վոր հայելին կամ «վահանը» ուղածիդ պես արտացոլի: Դադարձ:

Նքսպեղիցիայի անդամները լողանում են, մոռ են ուտում կամ սիմինդ խորովում, կամ՝ ոգավում գյուղացիների հյուրասիրությունից, դամոն կամ տանձ ու խնձոր հավաքում ու քաղում...

Ծերունիները հավաքվել են ծառի տակ, պատմում են հիշողություններ անցյալից, կատակներ անում, ծաղրում են այս կամ այն անցած-գնացած հարուստի արարքները, սուգա նշույթ փոխում, քննում, դատում են ներկան իր դերական ու բացասական կողմերով...

«Վերի թաղը» ժամանակին գյուղի ձմերանոցն է յեղել: Այստեղ, այժմյան փայլուն լուսամուտներով, քարով ու կրով պատած տների տեղը, գոմեր են յեղել, ուր ձմեռը անասուններն են պահել: Ծերունիներից յուրաքանչյուրը պատանի ժամանակ աշատեղ հովիվ է

յեղել կամ նախրապան, այս ու այն համիայի ձեռի տակ:

Դոմերը — տներ են դառել, աղբակույտերը — բանջարանոցներ և... նախկին տավարածներն ու չորաններն, իրենց տղաներով ու թոռներով, տերն են այժմ գյուղի, տերն են հողի ու յերկրի...

* *

Սահակ բիձեն կոխողի անդամ է: Նրա շուրջը բոլորած իր հասակակիցները դեռ կոխող չեն մտել, բայց հետաքրքրվում են կոխողի կյանքով, ուզում են «ստույգ» իմանան իրենց հասակի մարդուց. ջահելներին այնքան ել հավատ չեն ընծայում:

Սահակ բիձու մոտ, քարին նստած, բայց կուան տակերին փայտեր դեմ տված — հենակներով մի հաշմանդամ, ութսուն տարին անց, հարց ու փորձ է անում.

— Սահակ, ասում ես քեզ ել են բաժին տալի, ելի...

— Տալիս են, բայց. բա վոր չտան վոնց կապրեի...

— Ախր դու ինվալիդ*) ես, բան չես շինում, քեզ վոնց են պահում...

— Յես ինվալիդ եմ, հրեն տղես, հարսս, թոռներս սաղ ըլն. բա նրանք ում համար են աշխատում...

Հենակներով ծերունին կասկածով նայում է Սահակ բիձուն, շուրջը նստածներին, լեզվի ծայրն ատամներին կպցնելով ծրվացնում, գլուխը բացասաբար որորում...

*) Ինվալիդ — ինվալիդ՝ հաշմանդամ:

Սահակ - բիձեն իրոք ինկալիդ ե. ձեռն ու վոտը
դողդողում են անընդհատ. մեզ ել հենց այդպիսի զե-
րակատար ե պետք. նա անփոխարինելի յե:

— Բա... — ծոր ե տալիս հենակներով ծերունին:

— Ի՞նչ բա... ել բա չկա, կոխող մտի, հրեզ դու
յեկ ես ինձանից բեթար ինվալիկ:

— Բա ասում են, թե ինչ ունես - չունես ձեռիցդ
խլում են, տանում. տանդ աշխատողը կոխողում ուրիշի
համար ա գործ շինում, քեզ ել, վոնց վոր անպետքի,
ինվալիկի, բաժին չկա...

— Ասում են... հիվ ա ասում, մի շանց տու գա-
վազանս ես լքեցադ ձեռովս կարկաժումը ցից անեմ...

Սահակ բիձեն վրդովվեց. ձեռներն ավելի յեն
դողդողում ջղախուժյունից:

— Հայտնի բան ա... — մեջ ե ընկնում մեկ ու-
րիշ ծերունի, վոր ժամանակին շատ հարուստ ե յեղել
խկ այժմ միջակից ցածր տնտեսություն ունի:

— Ի՞նչն ա հայտնի բան, Բեզո: — Վրա յե
պրծնում Սահակ բիձեն:

— Են ա հայտնի, վոր ես խալխին ուզում են կո-
տորեն...

— Ո՞վ ա ուզում կոտորի...

— Ա՞յ մինը հենց եղ քու կոպերատիրը... Փողով
վոչ ձոթ ա տալի, վոչ սապուն, վոչ չայ - շաքար, վոչ
ել ուրիշ բան. ասում ա — ցորեն տու, յեղ տու, պա-
նիր տու, ձու տու...

— Հն, հն, ել ասում են... — Բեզոյի խոսքին ույժ
ե տալիս յերրորդը:

— Ասում ա, դու յեկ տու, ջանդ հո դուս չի գալի.
բա են քաղբի խալխն ել մեզ պես ջան ա, թե չե. նրանք

եկ ապրել են ուղղում, թե չե. գեղացին վոր իր ունե-
ցածը պահի, չտա, նրանք վոնց կապրեն, վոր մեզ հա-
մար ձոթ ու կտոր պատրաստեն, դարկեն... — Ջախը
բարձրացնում ե Սահակ բիձեն: Ջախը զայրույթից
քիչ խզվում ե:

— Փողով թող տան, ելի, փողն ել կառավարու-
թյունը չի շինել...

— Ասած ա, «փողը շանը տվին չկերավ», ապ-
րանքդ տու, անպանքդ. ես հենց ասենք շատ փող ու-
նես, վոր ապրանք չըլի...

— Յես ել հենց եղ եմ ասում, ողորմի հորըդ, կո-
տորելն ել վոնց կըլի... Հրեն ապրանքը բերել են կո-
պերատիրումը դարսել ու տալիս չեն իրանց կտրած
փողով... Նոթն ինչ նոթ ա, գրվանքն շինել են տաս
շահի, բա սա որենք ա...

— Վոնց թե տասը շահի, ինչ ես սարսաղ - սար-
սաղ դուս տալի, ես խալխի միտքը խառնում: Քեզ ա-
սում եմ, Բեզո, միտքդ դուզ պահի, զրիցդ ճանաչի...

— Ել վոնց ճանաչեմ. ընժ, քեզ փաստ, վոնց
վոր ձեք կոխողի նախագա Ալեքն ա ասում: Ես ախ-
պեր ջան, ետոր - ետոր ձվի մի հատն արժի մի արասի.
հինգ ձուռ — մի մանեթ. պետք ա հինգ ձուռ տանես
տաս, վոր երկու գրվանքա նոթ տան. ես ելմով գըր-
վանքն տասը շահի, թե չե... խեղդեքամունս ես տվել,
կոկոշդ դարդակել, եկել նստել ես խալխի միջին ու
չես գիդում, թե երկու, մին ել երկու — չորս կանի...

Ծիծաղում են: Սահակ բիձեն գլուխը կախել ե,
ձեռնափայտի ծայրով գետինը խաղաղում. թվում ե,
թե պարտված ե: Ծիծաղը — ծաղրի յե փոխվում.

— Դե, ջուղաբը տու յե...

Սահակ բիձու ձեռները դողդողոցին գլուխն ել ավելացավ. անկանոն ե շարժվում:

— Հրեղ լելքոցը ջանդ կգցի հա... Սրան հաշիվ կա-
սեն, հաշիվ գողի բան հոչի, վոր համատարած անեք...

Ընդհանուր քրքշոցի մեջ, մեկ ել Սահակ բիձեն,
իրեն հավաքեց. գլուխը բարձրացրեց ու շեշտակի նա-
յելով Բեգույին, մյուսներին սաստեց.

— Սնու կացեք, տազ արեք: Բեգո, հաշիվդ հիմի
յեկ թարս արա, տես վոնց ա դուս գալի...

— Վոնց թե թարս. թարս հաշիվս վորն ա...

— Խեղճդ չի կտրում, հա... Ա՛խ խալիս, ես Բեգոյի
տղեն, են վոչ ու փուչ Անդրին, ես գեղի շարչին եր, չի...

— Հա բա, շարչին եր, բա... հավան չի, նոթի
գրվանքեն մի շահով եր ծախում... — Զայրագին դո-
չում ե Բեգոն, վերքը չանգոած վիրավորի պես:

— Կամա՛ց, կամա՛ց, Բեգո, ականջիդ ծակը բեր-
նումս պահի, բալբի զրիցս բեյինդ մտնի... Յեռ ել
հենց եդ եմ ասում... Ես քու Անդրին ձվի հատը մի կո-
պեկ եր հաշվում, չի... Ես հինգ ձուռն կանի մի շահի,
դրուստ ա...

— Բան ասեցիր, են վախտն ուրիշ եր... — ասում
ե ու յերեսը շրջում Բեգոն:

— Հո, հո, հո, հո... Բեգո ջան, կամաց քշի, սելդ
շուռ կտաս... Եդ վոնց եր ուրիշ... Հավերն ելի են հա-
վերն են, ձուռն ել են ձուռն ա, Բագուռն ել յետ իրան
տեղն ա, նոթն ել են նոթն ա. ել ի՞նչ ուրիշ... Համա
չի... Դրուստ վոր ուրիշ եր. են վախտը հինգ ձվին
տղեդ մի գրվանքա նոթ եր տալի, հիմի կոպերատիրը
ելի հինգ ձվին — երկու գրվանքա յա տալի... Հիմի
ասա, տենամ, գրվանքեն տասը շահի յա գալի, թի՞

երկու կոպեկ ու կես... Տո, անհողի, մի արասով հավ
ենք առել, բա քու խղճի՞ն ինչ ես ասում, վոր ձուռն
ես մի արասի հաշիվ անում... Հ՞ը... Թարս հաշիվը
հիմի իմացա՞ր...

Սահակ բիձու հաշիվն այնքան եր պարզ և ան-
վիճելի, վոր Բեգոն վեզը խլել տված յերեխայի պես
քիթ ու մոռթը կախեց:

«Անհարմար» լուռթյունն ընդհատեց մեկ ուրիշը.

— Բա ձոթ ու կոճրին ինչ կասես...

— Ծոթ ու կոճրն ել, ուրիշ բաներն ել նմանա-
պես. ես իմ արած հաշվի ծերեցը բռնի ու գնա, կտե-
նաս, վոր հաշիվը դուդ ա, ել յետ յեղը վոր մի արասի
հաշվես գրվանքեն, պանիրն երկու շահի, — գառը ո՞ւս-
տըն արասի, ամեն բան կգա, բարեբար կկանգնի, հա-
լա մի բան ել ավել կստանաս, վորովհետև, առաջ ար-
շին եր, հիմի մետրո յա, մոտ մի չարեք ավել արշի-
նից...

— Ինչ ուզում ես, ասա, Սահկ. մեջ տեղը խոր-
թուլթյուն կա. են վոր կոկեկտիվն ա, առաջ նա յա
ստանում բոլ-բոլ, են վոր մենք ենք, մեզ համար չկա.
բա սա ինչիցն ա...

— Խեղճդ եղբանն ել չի կտրում... Կառավարու-
թյունը ասում ա. ա՛յ, ախպեր ջան, քեզ անշահ —
անշալակ փող եմ բաց թողում, մաշինեք եմ տալի, վոր
գործերդ լավ կազմակերպես, հեշտ աշխատես ու լավ
ապրես, մենակ ինչքան ավելորդ հաց ունես, յեղ ու
պանիր ունես, իմ նշանակած գնով տու, վոր քաղքի
բանվորն ել քիչ եժան ապրի, ելի քեզ համար ձոթ ու
կոճր շինի, մաշինեք պատրաստի. իրար ոգնեցեք, վոր
լավ ապրեք երկուսդ ել: Կոկեկտին ել համաձայն ա,

դրա համար ել առաջ նա յա ստանում: Համա քու տղեն
իրեք ձու յա ջերումը դնում, գնում շոշի ճամփի վրա
շինած կողերատիրի ճաշարանը: Իրեք ձուն անխղճ -
մտանքի պես ծախում ա իրեք արասով ու եդ ճաշա-
րանում հացը հետը երկու տեսակի ճաշ ուտում, եդ-
քան փողով, կողերատիրի տունը քանդում, եդ որենք ա...

— Ասելդ ինչ ա, ճաշ ել չանի խախը...

— Իրավունքը վոր ինձ տան, քու տղի պեսերին
ճաշ չե, ասծու կրակ ել չեմ տալ: ճաշարանի դռները
վրեն կփակեմ... Յես ու դու վոր մտել ենք միկիտան
Շամիրի խարչենին, երկու մանեթից պակաս ծախս
ենք արել... Են ել վոր տուն ենք յեկել ու սազ մի
շաբաթ փորահարիքի ձեռից հալվել, մաշվել, ետ ել
չեմ ասում...

Ջրույցը կոլեկտիվից ու կողերատիրից անմի-
ջապես փոխվում ե միկիտան Շամիրի արարքների
շուրջը: Այդպես ե լինում սովորաբար, մանավանդ
գյուղերում, այն ել ծերունիների շրջանում: Ինչից վոր
նոր մարդ ե մեջ ընկնում, հիմնական հարցը թողած՝
սկսում են հողովել նորը, վոր կապ չունի բնավ նախ-
կին հարցի հետ, մինչև վոր պտտվելով, պտտվելով,
կրկին դալիս կանգնում են հիմնական խնդրի վրա:

Միկիտան Շամիրի արարքները ծամված - ծամ-
ծամված, անցած - գնացած բաներ են, բայց աշխուժով
պատմում են, իրար բերնից խոսք խելով:

Հենակներով ծերունին չափազանց մտազբաղ ե,
մտահոգ: Ունի մի կով, մի գույզ յեզը, հինգ գլուխ
կթի վոխչար: Ինքն ե, թուր ե հարսը, չհաշված ան-
չափահաս յերկու յերեխային: Ապրուստը ծանր ե.
կյանքը՝ մենակ մարդու համար թանկ ու կրակ: Ինչ

անի... Որ ու գիշեր մտքի կշիռը շարժում ե այս ու
այն կողմ: Նստարները մեկ այս, մեկ այն կողմ են հակ-
վում: Հի կարողանում կարգավորի: Վախենում ե հա-
մաձայնվի, կոլեկտիվ մտնի, թուր ու իր կինը հաշ-
մանդամ ծերունուն թողեն «չոր քարին» իրենք մտնեն
կոլեկտիվ... Ո՞ւր գնա եդ տարիքին: Վոտը չի բռնում,
ձեռքը չի գործում, նամուսն ել «վեր չի ունիլ» մու-
րացկանություն անի: Ժամանակին ինքն ե կերակրել
ուրիշներին: աղքատ, աշուղ, ճամբեն մոլորած ոտա-
րական նրա դռնից դատարկաձեռն յետ չի դարձել...
Հիմի ինքն ուրիշի ձեռին մտիկ անի...

— Ախը... Մհակ... — անվստահ ձայնում ե հե-
նակներով ծերունին... Ինձ մի խելքը գլխին բան չա-
սեցիր, մի ճամփա չի շանց ավելր...

— Ճամփեդ, հրեն... Էն ա. կոլտողը...

— Սահակ բիձա, Սահակ բիձա... կանչում ե ու-
ժիսյորի ոգնականը:

Սահակ բիձեն շտապ վեր ե թռչում:

— Մհակ, ախըր գրեցդ կիսատ մնաց... — համա-
ուորեն պնդում ե հենակներով ծերունին:

— Իրիկունն արի տուն, մնացածը թամամ կա-
նեմ...

Սահակ բիձեն կանգնել ե «վահանները» մեջ տեղը.
հրամայված ե ապարատին չնայել. լրջությամբ կատա-
րում ե ուժիսյորի պատվերները:

Հենակներով ծերունին փայտե «վոտներն» իրար
տալով մոտենում ե, վոր դիտի ե սպասի իր հերթին:
Գլուխը կախ գնում ե ինքն իրեն հետ դրուցելով:

— Ասում ա ճամփեդ են ա... Ասում ա, ես ա-
շունքը վրա յա հասնում, տանեցոց հետ մասլահաթ

արա, ինչ ունես - չունես հավաքի ու կոլխոդ գրվի...
Բեգոն ել կարաց վոչ Սհակի խոսքը կապի, հալբաթ
Սհակը դուզ ա ասում, ելի...

*
*
*

Յերեկոյան, գուցե հենց են ժամին, յերբ հենակ-
ներով ծերունին Սահակ բիձու տանը նստած նրանից
մի «ճամվա» յեր սովորում, վոր իր կյանքի ֆնացած
որերը դառնությամբ չանցնեն, յես, սենյակումս մե-
նակ նստած մտածում եյի «ինչալիկ - ազիտատոր»
Սահակ բիձու մասին:

Ես վայրի ձորերում, ես խուլ և մթին անտառ-
ներում ու քարանձավներում մեծացած, անդրադետ,
անդամալույծ մարդը, վոր կյանքի ծանրության տակ
գրեթե քայքայվել ե, տասը տարվա ընթացքում նոր
մարդ ե դառել և... ուզում ե իր դողդոջացող ձեռնե-
րով գավազանը «կարկաժումը ցից անի» են մարդու,
ով կհամարձակվի կոլխոզի դեմ վորեւս ստոր բան ասի,
զրպարտի...

Մտածում եյի և այն մասին, վոր յեթե վորեւս
տեղ պատմեմ այս «առասպելը», վրաս կամ կծիծաղեն,
կամ կասեն. «սուտ ե, ինչսուտ տարեկան անդամա-
լույծն այդպես չի կարող դատել. չափազանցում ես,
տենդենցիոզ բաներ ես ասում»...

Սակայն... Սահակ բիձեն կա, ապրում ե դեռ, և
վորպես կենդանի վկա, հավանորեն, նման թերահա-
վատների «կարկաժումն ել ցից կանի» իր հոնի փայ-
տից շինած, բավական ամուր գավազանը...

1930 թ., դեկտեմբեր
թիֆլիս

ԱՆԻԾՎԱԾ ՀՈՂԸ

Խոսկան եր հողը:

Հեռվից նման եր շուռ տված շաջի, մոխրի այրված
շաղախով ծեփված: Կալճափոշին հանգցրած կրի պես
փորթ - փորթ յեղած, փոշու նման սպիտակին եր տալիս
տեղ - տեղ: Գետնից կպած սակավաթիվ ցաքի փշի
թփերը չմբուլի պես, խանձված կուչ եյին յեկեկ յեղ-
նաքաւերի կողքին, վորոնց տակ կրյաների բունն եր
միայն, իսկ հարթավայրում դաշտային մկների, լոր-
տուկների և ոձերի ծակերը:

Գարնան սկզբին ինչ-վոր կանաչ լալըձուն, խո -
տանման բան եր բուսնում մամռի պես, կպչում գետ-
նին, վորից ժամանակաւորապես փոխվում եր ընդար-
ձակ սարալանջի դույնը. ապա կանաչը թխվում եր,
չորանում մճրվում անցվոր մարդու կամ անասունի
վտտների տակ, դառնում փոշի:

Բերքառատ տարին, յերբ խոտն որան - որան
լլկում եր և բունում արահետներն ու ժայռերի խու-
թերը, մրկած սարալանջի վրա, ճաղատ մարդու գլխին
ֆնացած հատ ու կենտ մաղերի պես, յերբեմն յերևում
եյին կառան փշակծիկներ ու տատասկի արմատներ,
վորոնք ծռմոված հանդույցներով փովում եյին գետնի

յերեսով ու փշե մավթուղների պէս արգելում մանրապճեղ կենդանիներին անց ու դարձը:

Հողը նախկին բեզի կալվածքի մի մասն էր:

Ավանդություն կար գյուղում այդ հողի մասին: Ծերունիները պատմում էին, թե իրենք յերեսա ժամանակ ջուր են խմել սարի փեշի մոտ ընկած մեծ քարի տակից բլթացող սառն աղբյուրից, թե՛ սարալանջը թեև սեհրակ, բայց զովաշունչ շուտ է յեղել, թե՛ իրենք շատ թռչունների բներ են քանդել, այս կամ այն թփին թառած, կաքավի ձվեր հավաքել, մոշ քաղել, մորի կերել, կով ու յեղն են արածացրել այնտեղ, ձիպոտ են կտրել, դալար կարմրաստի ճուղերից կողովներ գործել...

«Են որեց, — կտարվեր նրանց վրան են որը, ես տեղ չհրեային, — հենց վոր յեկան չինոջնիկները, չափեցին չափչփեցին մեր հողը, ես ու են սարի ծերին կուրգաններ արին, սահմանագլխին ածուխ թաղեցին ու մեղ տնով — տեղով աղի ճորտը շինեցին, մեր սարերն ու դաշտերը, այգիներն ու անտառները տվին նրան, են որից ել եղ հողը չորացավ, խանձվեց, երվեց, աղբյուրը ցամաքեց ու վրնց վոր հիմի տեսնում եք, եղպես ել մնաց: Յերկնքի անեծքը բեզի գլխի տեղակ թափվեց դառ գլխին ու դարձավ արգանդը չորացած չբերք կնիկ»:

«Անխձված հողը» այդպես ել մնում եր ամայի, խոպան, տատասկոտ...

«Պործարանը բանվորին, հողն աշխատավոր գյուղացուն»:

Հողը արևի ճառագայթներից ել ավելի արագությամբ տարածվեց բոլշևիկյան այս լոգունգը յերկրի ամեն ծայրում: Մտավ ամեն մի չքավորի բորբոսնած հյուղ, ջերմություն տվեց, թափանցեց ու հրահրեց աշխատավոր գյուղացու միտքը:

Գյուղը փոթորկվեց:

Գրավեցին բեզի հողերը, բաժանեցին կալվածքը, նախկին տերերի թոռները տիրացան իրենց պապական ունեցվածքին, բայց անկանոն. դեռևս կային զրկվածներ ու դժգոհներ, դեռևս մի քանի ուժեղ ձեռներ կարողացան ավելին գավթել ու տիրապետել: Տարիները խառն էին, անհանգիստ: Խոսողն ավելի շուտ հրացանն էր, քան մարդու ձայնը, լեզուն:

Գյուղամիջում մի տուն կա յերկհարկանի, քար ու կրապատ, թիթեղյա տանիքով, կապույտ ներկած մուհաջարներով, պատշգամբի կարմիր սյուների զուլխները կամարածև նախշերով իրար միացած: Պատի ճակատին քանդակված է մի մարդու պատկեր, հաստ բեխերով, խիստ հայացքով, վորից գյուղի յերեսներն անցնելիս զարգանդում են: Աղեղնածև շարված տառերը հայտնում են, վոր այդ մարդը գյուղի տերն է — «Մանաս — բեզ Մելիքով»: Պատկերի աջ ու ձախ կողմում քանդակված են վեց թևանի հրեշտակներ, դեղին ներկված, կարծես խեցգետինների լինեն: Ասում են, թե բեզը գյուղի տերերի խորհրդով իր պատկերը շրջապատել է «վեցթևյան Սերոբե և Գերոբե» պահապան հրեշտակներով: Կրոնի և բեզի ույժը դաշն են կնքել իրար հետ, վոր ճնշումն ավելի զորավոր լինի և անդ:

Մանաս — բեզը «վատ հոտ» է առել, ժամանակին ծլկել է գյուղից, տան դռների վրա ծանր կողպեք է

կախել, իր անճշակաւ կնիքով կնքել, վոր վոչ վոր
չհամարձակվի իր բացակայութեան միջոցին կոտրի
«զմբուռի փեշատը»: Բայց համարձակներն մի խումբ
կեռումնու սանդուխքներով բարձրացել ե վեր, շոշափել
կնիքը, վորի վրա յերկգլխանի արծիւ կար ու թագ:
Մեկը հեգնորեն ժպտացել ե, պոկել կնիքը, ջարդել,
վոտնատակ տվել, կոտրել փականքը, ուժեղ բռունցքով
հրել, դուռը բացել, ներս մտել ու կանչել մյուսներին:

— Ընկերներ, որես դենը սա կոմբլիշի սենյակն
ե լինելու, իսկ կողքինը՝ հեղիմար:

Ասում են, թե Մանաս - բեզը լսել ե այս մասին,
զայրացել, կատաղել, փրփրել ու սպառնացել տանլով:
«Եղ արարքը ձեզ չի մնալ, կզա մի որ, քթածակներիցդ
կհանեմ»:

Մանաս - բեզը դեռ ետոր ել սպասում ե «են որին»,
բայց են որը չի պալիս: Կոմբլիշը պինդ նստել ե իր
տեղը, իսկ կողքի սենյակում այժմ դյուղխորհուրդն ե
իր նախագահով, վորը Մանաս - բեզի նախկին բառ-
բակներն ե:

Կատակ են անում հաճախ դյուղխորհրդի ե կոմ-
բլիշի անդամները, նայելով Մանաս - բեզի պատկերին:

— Յեկեք ես իշի հրեշտակի պատկերը քանդենք,
ինչ ա մնացել ես պատիցը կպած, աշունքվա սատկած
ճանճի նման:

— Չէ, թող մնա, թող մնա ու մեր արարքներիցն
ել ավելի կատաղի, չես տեսնում, վոնց ա փրփրելուց
աչքերը չոքի...

— Տնաշին, ես սող գեղիցն ու մյուլքիցն եղ մար-
դուն եղքան տեղ ել չի հասնիլ, վոր եղ պատիցը քար
դառած, կպած մնա...

— Հլա բեղերին, բեղերին, կասես բուղի պողեր
ընեն. համա հարու կտա համ...

— Ասում են Մանաս - բեզը բեղերը խուզել ա,
հալքաթ ինքն ել ա տեսնում, վոր ել կարալ չի հարու
տա...

Գյուղը խոր քնի մեջ ե: Անթափանց խավարի
մեջ լուսատուիկի նման մի լույս ե շողում միայն: Կոմ-
բլիշի սենյակի լուսամուտից ե ցոլում փողբիկ լամպի
շողքը, վորի չորս բոլորը նստած մոտ 10 — 15 հոգի,
լուջ ու մտախոհ դեմքերով լսում են ինչ - վոր թղ-
թերի ընթերցում: Ուղեղի ծայրահեղ լարումից շատերի
ճակատի վրայի մեծ յերակն ուռել ե, արյունով լցվել,
քիչ ե մնում պալթի: Թղթերի մեջ անհասկանալի տե-
ղեր ու բառեր կան: Ա՛խ, եղ տաղանքը, ա՛խ, եղ գրող-
ները, վոր չեն կարողանում պարզ լեզվով, հասարակ
ու հասկանալի գրեն...

— Ընկերներ, — ընթերցումը վերջացնելով խո-
սում ե կոմբլիշի քարտուղարը: — Վոնց վոր լսեցիք,
յերկու բանի մասի կարգացինք. մեկը — հողաշինա-
բարութեան, մյուսը՝ կոլեկտիվ տնտեսութեան: Հարցը
պարզ ա. մեր հողերն անկանոն ենք բաժանել մեզ ու
մեզ. հիմի կենտրոնից հողաչափ կզա, մարդավալը կչա-
փի, հողը շնչի կանեն ու ամեն մինը զակոնով իր բա-
ժինը կունենա, թե ավելանա, են ել ֆոնդի մեջ կդրենք:
Ես ուրեմն շատ պարզ ա. սրա մասի ել ինչ խոսք:
Մենք պետք ե ամեն միջոց ձեռք առնենք, վոր ես հո-
ղաշինարարութեան գործը լով դնա, աջակցենք հողա-
չափին, ցույց տանք մինչև որըս դավթար չլսված հողերի
տեղը...



— Մի ցուցակ ել կազմենք են տնվորներէ, վոր հողաբաժին են վերցրել քաղքունն ապրող իրանց տղի, հարսի կամ փեսի համար, — ընդհատեց մեկ ուրիշը:

— Եդ պարզ ա. եստեղ ել շատ պարզ գրած ա եդ մասի, թե՛ ով վոր իրան ձեռով հող չի մշակում, այսինքն՝ ով ինքը չի վարում ու ցանում, նա հող ստանալու իրավունք չունի, թե չե ինքը քաղաքունն իրան աշխատանքին, գեղունա ել հող ունենա, եդ ել հո նոր զայդի Մանաս - բեգ կդառնա գլխներին:

— Պարզ ա, պարզ ա, են մեկել բանի մասին խոսա, — ձայնեցին այս ու այն կողմից:

— Մեկել բանն ել զուտ կուսակցական գծով ա. սա նոր բան ա, համա մտքիցը վոնց վոր յերևում ա, լավ բան ա ուզում: Հարցը պարզ ա — կոլեկտիբի մասի յա...

— Կոլեկտիբ չե, ընկեր, կոլլեկտիվ, — ուղղեց կոմյերիտական Բախշոն:

— Հաշիվը մին ա, լիզուս լավ չի պտտում: Հարցը պարզ ա, ընդհանուր գործ ա ուզում. միանանք միասին աշխատենք, միասին ուտենք. հողը — միատեղ, վար ու ցանը հավասար. թե ուղենք՝ ապրանքներս ել կխառնենք իրար, մի գոմ, մի մարազ, մի թիջան մի խնոցի...

— Հո, հո, հո, հո, հո... կամաց քշի, լի՛նչ ես կարկտաթակ անում, կաց մի ասածդ գլխիս մի բուրջում տեղավորեմ ե... յանի ետ վոնց թե հողը միատեղ, Եեկ յալիցն իմ հողը հո շալակելու չեմ, բերեմ քու տանձուտի տակի հողին կպցնեմ...

— Հարցը պարզ ա ընկեր ջան, Եեկ յալն ու Տանձուտը մոիցդ գցի. հողաշինարարության վախտը եդ

ամենը փոխվելու յա, հենց գիդաս քու հողը քեզ վրա յեն հափելո՞ւ, ո՞վ գիդա վորտեղ գցեն...

— Եդ վոնց կըլի... տարակուսեցին մի քանի հոգի:

— Պարզ ա, վոր ըսենց կըլի, վոնց վոր հրես ես հրահանգի մեջ գրած ա. այսինքն՝ կոլեկտիբի անդամները միատեղ հող կստանան հանդի մի մասիցը, համաձայն իրանց ունեցած շնչի...

— Բա, ես ասենք, իմ շունչը շատ, քու շունչը քիչ, յես վեց - ոխտը ջան, դու՝ երկու հոգի, դրա բանը վոնց կըլի, յես շատ հող ստանամ, շատ ել աշխատեմ, դու ինձ հետ հավասար բաժին առնես քիչ հողով ու քիչ աշխատանքով...

— Եդ ել պարզ ա, ընկեր ջան, շատ շունչը շատ հող կստանա, շատ ել բաժին. դու վեց — ոխտը ջանի բաժին կստանաս, յես ել երկու. կոլեկտիբը հո նրա համար չի, վոր քու աշխատանքն ու հողը զավթի, ինքն ուտի, քեզ սոված թողա, ուրեմը՝ քու կարծիքով յես ել ասեմ, թե՛ մենք երկու ջան ենք, վոնց ըլի կապրենք, ել խի՞ յենք ձեր վեց-ոխտը ջանի համար իշի մշակութին անում... Եդ վոնց կըլի. բա ել վոնց որվա կոմմունիստներն ենք, վոնց որվա կոլեկտիբը...

— Ասենք, հողի մասին ասածդ լավ ա, համա ապրանքիցը խելքս մի քիչ լավ չի վարում...

— Կվարի, կվարի, խելքիդ խոփը վոր լավ սրես՝ եդ ել կվարի. հարցը շատ պարզ ա:

— Ընկերներ, — ընդհատեց Փոկ - ի նախագահը. ես գործի մեջ շատ խորը միտք կա, յես առաջարկում եմ հիմի հաստատ վորոշում չկայացնենք, գավառից մարդ ուղենք, թող գա մի լավ բացատրի, ամեն բան տեղին ասի, վոր մենք ել համ ինքներս սրտով կըպչենք, համ ել ուրիշներին մեզ հետ տանենք...

— Հարցը պարզ ա, ընկեր ՓՈՒԿ, ինչ վոր գրած ա, կարդացինք ու հասկացանք, եսա դեմս ել գրվինք կոլեկտիվի մեջ, պրծավ, գնաց...

— Ձե, — առարկեց մեկ ուրիշը: — Ընկերը լավ ա ասում, եսոր - եսոր խելի վոչ յես, վոչ ել դու, եղ դադի անումը դրուստ չենք կարում ասենք, մեջը վոնց հասկանանք, լավն են ա մարդ կանչենք, վոր մեզ բացահայտ ասի կոլեկտիվի նշանակութունը:

Ժողովականների մեծամասնութունը համաձայնակց այս առաջարկին և արձանագրության «վորո՞՞ցի» մասում գրվեց. 1. Աջակցել հողաշինարարության գործին: 2. Գավառից խնդրել մի ընկեր, վոր գա բացատրի կոլեկտիվի նշանակութունը:

Աքլորի առաջին կանչն եր, յերբ ժողովը ցրվեց: Տաք վիճաբանութուն եր սկսվել փողոցում կոլեկտիվի շուրջը, խոսում եյին, հարցեր տալիս միմյանց, հակաձուռում:

Կոլեկտիվի գաղափարը հանգիստ չեր տալիս կոմբլիշի անդամներին: Ամեն մեկը վորո՞՞նում եր այդ միտքը, ինքն իրեն հետ կովում ու հաշտվում, մերժում կամ համաձայնվում. մինչև անգամ յերազում տեսնում եյին ապագա կոլեկտիվն իր գրավիչ կամ բացասական կողմերով: Իսկ վումանք յերազում տեսածը պատմում ու հրամցնում եյին վորպես իրական փաստ, վոր տեղի յե ունեցել այս ինչ կամ այն ինչ կոլեկտիվ տնտեսության մեջ, հետո տեղում, ինչ - վոր յերևակայական գյուղում:

Հարցն այնքան ալրող եր, վոր կոմբլիշի սահմաններից դուրս յեկավ. ընկավ բերն - բերան, ծամեցին, ծամծմեցին, գզեցին ու մանեցին և, բնականո-

րեն, չարակամները հրեշավոր առասպելներ հորինեցին, հողի կոլեկտիվացմանը կցելով նաև կանանց կոլեկտիվացումը:

Կոլեկտիվը չվանի դրին:

Գյուղն իրար ե անցել: Յերկու բանակ դեմ առ դեմ կանգնած աղմկում են. յերկուսն ել լավ գիտեն իրենց անելիքը: Հողաբաժանման կռիվ ե: Շատ հող ունեցողները չեն ուզում դիջեն իրենց դիրքերը. ամենից շատ նրանք են գոռոզոռում: Կան մի խումբ մարդիկ ել, վորոնք չեն խառնվում պայքարին. սպասում են, տեսնեն նժարի վոր կողմն ե ծանրանում, վոր կողմն ե ուժեղանում, վոր անցնեն այն կողմը:

Ինչ - վոր Թուղթ ե մեջ տեղ յեկել. հողաչափը շուռ ու մուռ ե տալիս Թուղթը, աղբանուեններ կարդում. ամեն մի անվան հետ հեգնական բացականչութուն ե լսվում կոմբլիշի և նրա կողմնակիցների շարքից:

— Քաղաքումն առուտուր ա անում:

— Ամառները կնկանը դաչա յա դարկում, վոր կողակերտովի սիպտակ կտորն ու ձուռն առնի, դարկի քաղաք:

— Քաղաքումը զաստըութին ա անում:

— Նալոգը չի տվել, հրեն իշի բաղնիսումը նստած:

— Մանաս - բեգի աղվակատն ա:

— Քաղաքումը մասնավոր պարտնոյ ա:

— Դաշնակնների ժամանակ ամիցներ եր, հիմի հրեն քաղաքումը վարժապետութին ա անում, լայեղ ել չի անում Թե գեղը գա:

— Ասա — վախում ա, լայեղ չի անում...

Հակառակ խումբն ավելի յե կատաղում:

— Հրետ լտենց բաներ եք խոսում, վոր ես որին ենք, ե՛ր, մի որինավոր մարդ ելա գեղը չի մտնում:

— Են մարդիկը վոր եգուց դան, ի՞նչ ջուղար եք տալու. ես գեղումը տուն ու տեղ ունեն, հերն ու մեր, ազգականներ ունեն...

— Խլեցեք, խլեցեք խեղճերի փայլը, վոր կուլեկտիվի բաժինը շատ ըլի...

— Յաչեյկեն աշկարա խեղդում ա մեզ, ա խալի, ի՞նչ եք ձեններդ փորներդ գցել տազ արել...

— Կուլեկտիվը հողի ամենալավ տեղերն ուղում ա զավթի, մեզ քոլերն ու դուրը գցի, ի՞նչ եք պապան-ձվել...

Ես ու ես կողմից բորբոքվող կրակի վրա նավթ են լցնում. խոսք ու զրիցը խառնվում ե, չես իմանում ով վորի կողմնակիցն ե, ուզածն ի՞նչ ե. ամեն մեկն ուղում ե ավելի բարձր ծվա, վոր մյուսների ձայնը չլսվի.

— Յաչեյկի տղերքը թող զրադ քաշվեն, գեղա-կանն իր բանը մասլահաթով կլերջացնի:

— Սուտ ոյին են սարքել, վոր հողի շահմար տեղը խլեն, մի նոր Մանաս - բեդ դառնան մեր գլխին. առաջ թե մի բեդ եր, հիմի տասնումինն ա լելու:

— Հրեն ե, հրեն... առաջուց ձայնագուրկ են արել, վոր եսոր ել ունեցած - չունեցածը ձեռիցն առնեն. նա յիլ շունչ - արարած ա, թե չե, ես գեղիցն ա, թե չե, մի կտոր հող ել ա կտաք, վոր երեսխանցը պահի...

— Մեզ հետ դավի չունեք, մեր բաժին հողը տված ա, հրեն... գերեզմանատանը, մարդս իրեք արշին հող,

դուք ձեր ցավը քաշեցեք, վոր սար ու դաշտը ձեռն-բիցդ խլելու յեն, մի ծառ ել չեք գտնելու, վոր տա-կին նստեք, շոգի ձեռիցն ազատվեք, — հեռվից ձայ-նում ե մի ձայնագուրկ:

— Դուրը դադադա յեն անելու, վոր ճիպոտ ել չկարենաս կտրես յեղդ քշելու համար, — վրա յե բե-րում մեկ ուրիշ ձայնագուրկ:

— Չմեռը տես մի կտոր փետ ելա կտան, վոր աչքդ կոխես, ոջախիդ ծուխը չկաքի...

— Ինչ կա չկա կուլեկտիվին, դու սոված գլուտա, ապրանքդ ել թող սատկի առանց խոտ ու դարման:

— Կուլեկտիվի անումը մեջտեղից հանեցեք, թող դրանք ել մեզ պես հողաբաժին ստանան հավասար, սարիցն եր, դաշտիցն ել:

— Չե... միասին, միատեղ են ուղում:

— Ուղում են հողի դմակը կտրեն, վոսկոռն ու պո-ղելը մեզ թողեն...

— Թե դոչադ են, թող գնան, հրեն... են անիծած հողն ավադ անեն, շենացնեն, են վախալ կասեմ, աֆֆերիմ յաչեյկա, քարիցը կանաչ հանեց...

— Հա, հա... լավ ա ասում, անիծած հողն իրանց փեշքեշ, ի՞նչ են կալել ես խալիի բողազիցը:

— Ով վոր հենց գիդի թե կուլեկտիվն ուղում ա հողի լավ մասը խլի, թող ինքն ել մտնի կուլեկտիվ...

— Սուտ են ասում, դրանք ուրիշին կուլեկտիվի մեջ չեն ընդունի, յես մտնում եմ, դե ինձ ձեռ մեջ առեք, հրեն, ամեն բան ել ունեմ, ինքս ել սազ գեղը կվկայի, վոր ամենալավ հողագործն եմ, կընդունեք, գալիս եմ. — գոչեց ձայնագուրկ Ղահրամանը, տեղիցը վեր կացավ ու շորերը թափ տալով մտավ ամբոխի մեջ:

— Կողմեկտիվը ձայնագրուկներին տեղը չի:

— Բա ում տեղն ա, գեղի լավ հողը դավթող-ներին...

— Վոր ասում եմ սարքովի բան մ...

— Սարքովին են կըլի, վոր ձեզ նմանները կողմեկտիվ մտնեն, շինեն կուլակի կողմեկտիվ ու բառ-բառներին հոգին հանեն:

— Դուք ել բան եք գտել, ելի. կուլակս վորն ա, ե, վորը, մի հալա իմ ձեռներին ել մտիկ ե, կասես կուլայի (կըյայի) մեջք ըլի. յես եմ շատ բանում, թե դու...

— Մին բանում ես, տասը բանացում:

— Դոչաղ ես, դու յեկ արա:

— Այ, հրես անում ենք, ելի, բա աչքդ չի տեսում. հրես կողմեկտիվ ենք կազմում, վոր բատրակը քեզ համար աշխատելու տեղ, իրան համար աշխատի, վոչ թե քեզ ու քեզ նմանների համար տնքա...

— Ընկերներ, հարցը պարզ ա. ընկեր Լենինն ասել ա, թե վոր տեսնես դուշմանդ հակառակ ա գնում քու արարքին, դու տեղդ դնա պինդ կաց, կնշանակի լավ բան ես անում: Ուրեմը՝ մենք լավ բան ենք անում, վոր կողմեկտիվ ենք կազմում, ով մեր կողմն ա թող դեսը կենա, ով հակառակ ա, թող դնա, ձայնագրուկներին ջաղացի ջուրը կապի:

— Դե, խախալվեցեք, հրես խախալը կշոկի: Խախալը շոկեց:

Մի մասը մոռեթները կախ, ընից դուրս գցած արջի պես փընթփընթալով քաշվեց, իսկ մնացածը կատակով ու գնացողների հասցեյին ծաղրական բացականչություններով ու ծիծաղով՝ մոտեցավ կոմբըշիշի խմբին:

Հողաշինարարությունն սկսվեց:

Կողմեկտիվի հիմքը դրվեց: Կոմբըշիշի անդամներից զատ, կողմեկտիվ մտան նաև մի քանի չքավոր ընտանիք, վորոնց համար գյուղավարկային ընկերությունը համապատասխան վարկ բաց թողեց:

Հողաբաժանման ժամանակ կողմեկտիվը վերցրեց նաև անիծված հողը, վորպեսզի հակառակորդների բերանը փակի:

— Եդ հողիցը թե դրանք մի բեռը խոտ ելա տուն բերեն, թող յես սաղ տնով՝ տեղով խոտ դառնամ, — ասում եր գյուղի «անատամ գելերից» մեկը:

— Մանաս-բեգի մերը՝ չմեռնի, նա վոր եդ հողիցն ոգուտ չքաղեց, ենքան գիտնական մարդը, դրանց ինչ ըռխի բանն ա...

— Եդ ել գեղականի աչքին մոխիր փչել ա, յանի թե՛ տեսեք, տեսեք, մենք անպետք հողն ել վեր կալանք:

— Համա շատ անխիղճ բան արին, վոր քաղաքում ապրողների բաժին հողը ֆոնդի մեջ գցեցին, պարապ - սարապ վեր ընկած կմա դուր տեղը:

— Ասում են կողմեկտիվը վարելու յա ֆոնդի հողերը, ինչ ել ոգուտ ստանա, տալու յա ֆոնդ - ին:

— Չե՛... ոգուտը արակտորի յեն տալու:

— Ցաչեյկեն կուտի:

— Իրանց ձեռին չի, վոր ուտեն նրանց բերանը փակողն ո՞վ ա...

— Թող տորգի դենն, տորգ անեն, ով շատ տա, նա յեկ վարի:

— Մեր տղա, միտքդ ենա, վոր թե դմակը ձեռք չընկավ, մորթուցն ելա մի քիչ ըռխես, հա...

— Դո՛ւ չաղ տղի տեղ ա. թե կարենամ եդ կոլեկտիվ առածդ տես վո՛նց եմ գլխի վրա ցից անում, վոր մենակ վոտները բալդի-բալդի անի...

— Ումուղով կաց, ումուղն ա կերել աշխարհքը...

Կոլեկտիվի մասին շատ խեր ու շառ խոսեցին, բամբասեցին, բայց կոլեկտիվի անդամները ասե - կոսեներին չեյին յենթարկվում: Միահամուռ աշխատանքով հողերը վարեցին. դարնանացանն աջող եր: Կոլեկտիվի հողերը վարելուց զատ, վարձով վարեցին ուրիշներին հողերն ել: Կթի անասուններն ել սար տարան, կազմեցին կաթնարտել: Սերդատը, վոր նորություն եր գյուղի համար, կաթնարտելի շուրջն եր համախմբում նաև անհատականներին:

Աշնանը բերքն այնքան առատ եր, վոր կոլեկտիվը վորոշեց ավելորդ հացահատիկը հատկացնել տրակտորի ֆոնդին:

Կոլեկտիվի հմայքը հետզհետե բարձրանում եր և զրավում շատերի ուշադրությունը:

Անիծված հողը դեռ ևս մնում եր նույն վիճակում, վորն առիթ եր տալիս խոսակցությունների: Պետք եր նրան ևս գործի դնել, տեղից շարժել: Խնդրեցին գյուղատնտեսին, վոր քննի ու իմանա, մի բան դուրս կգա եդ հողից, թե անհուսալի յե: Դյուղատունտեսն առաջարկեց գոմաղբով պարարտացնել. բայց դժվար եր այնքան տարածությունը ծածկել գոմաղբով: Կոլեկտիվը քննեց հարցը և վորոշեց անիծված հողի վերի մասում գոմեր շինել, վոր ապրանքը ձմեռն այնտեղ ապրի:

— Հարցը պարզ ա ընկերներ, գոմը վոր շինենք, ապրանքը կգնա, կգա, համ փեյինը կցրվի հողի մեջ, համ ել տեղն արևոտ ա, մեր ապրանքը չի մրսիլ:

— Բա ջուրը...

— Ջուրը հեռու յա, մի քիչ նեղություն կքաշենք, բայց վոչինչ, կմտածենք, մինչև գարունը գուցե կա - րողանանք մի արև անցկացնենք են վերի առվիցը:

— Վայ թե չարչարանքներս անտեղի կորչի...

— Հարցը պարզ ա, ընկերներ, ջուրը վոր գա, ապառաժ քաղն ել կկանաչի. դուք գոմերի մասի մտածեցեք:

— Ել լճնչ գոմեր, ենա մի մեծ գոմ շինենք:

— Համաձայն ենք:

— Եզուցվանից սկսենք. առաջներս ձուն - ձմեռ ա գալի, չուշանանք:

— Գեղումն ել պարապ մարդ շատ կա, մշակ կրոնենք, վոր շուտ վերջանա:

Արձանագրության մեջ գրվեց.

«Վորոցեցինք անիծած հողի վերի մասում կոլեկտիվի նամար մի մեծ գոմ շինենք. աշխատանքներն սկսենք եզուցվանից»:

Դուռնգն ու յերկաթե նիզը գործի եյին: Սկզբում աշխատանքը կարծես դանդաղ եր ընթանում, բայց հետզհետե ջուրը բազումները պրկվեցին, մշակները հանեցին շորերը, մնացին մետակ շապկով. հողախառն փխրուն քարը չեք դիտնում այլևս ուժեղ հարվածներին. հիմքը գցելու փուլը յերկար ու մեկ ձգվում եր: Սալ ածող ու յերդ կապող Արթինն սկսեց տեղն ու տեղը յերգեր հորինել ու յերգել, վորին ձայնակցեցին և մյուսները:

Դե՛ քանդեցե՛ք մի գոմ շինեմք մեծ ու լեց,
Թող վոր մեռնի Մանաս - բեգի մեծ բալեն.
Մանաս - բեգին ես գոմի մեջ կկապեմք,
Թե վոր սասկի՛ լեցնի ու երկանք կշափեմք:

Կոլեկսիվը ես հանդերում վար կանի,
Ես մեր գեղի կույակներին քար կանի,
Աղբա՛ս, բա՛սրակ ու խեղճերին հավա՛հա՛ծ
Նրանց ցավին, նրանց դարդին նա՛ր կանի:

Յերգն աշուհեա՛տե դառնում ե քամբառակ, հայ -
հոյախառն - ուղղված Մանաս - բեգի, գյուղի կուլակ-
ները հասցեյին: Տղերքն ափելի յեն աշխուժանում,
Ժափ ու ծիծաղն ընկնում ե. մեկը մինչև անգամ խոռն-
ջիկ - մունջիկ ե անում, կոտորաւում, ինչ - վոր հարս-
աի կնկա պարի ավել ե անում քրքրվելով, -- տնազ
տալիս:

— Դե, ձեզ մատաղ, խաղն ու պարն իրան կար-
գին, հուպ ափեք, դուս անենք:

— Պահ, հալա ես ցորենի ամբարին... Անիծածներն
ենքան ցորեն ու գարի յեն հավաքել, վոր մի տուն
յեթիմ կպահի... Քլունգի ծայրով մեկը բաց ե անում
գետնի տակ ամբարած մըջյունի ձմեռվա պահեստը:
Աշնան արեւը դուրեկան ջերմություն ե փռել:
Գյուղամիջում, պատերի տակ նստոտած մի քանի
նախնին աղաներ, արեւլյան ծուլության սիմվոլ համ-
բիշը ձեռներին՝ չրիկացնում են, հորանջում: Կողերը
դեմ արած արեւին, զրույցը թեքել են կոլեկատիվ ու
բշիշի վրա.

— Ինչ վոր աշխատել են, հրեն անիծած հողումն
են թաղելու. իրանց աշխատանքի համար գերեզման են
քանդում:

— Հայտնի բան ա, ետ հողը պտուղ չի տալ:

— Ձորին թե քուռակ կծնի, անիծած հողն ել
խոտ ու արտ կտա:

— Տենաս խելքներին ինչ քամի ա փչել. գոմ են
շինում, վոր հայվանի թրքիցը հաց հանեն:

— Իրանք շաշ են, եդ քիչ ա, են խեղճ ու կրակ
քյասիբներին ել են շաշացրել:

— Նշը դատի, ձին ուտի: Հրեա կքամեն, կմզեն,
ել յետ աղքատը մեր դուռը կգա:

Հավաքվում են աշս ու աշն կողմից բոշ - բողազ-
ները, հավանություն տալիս նրանց ասածներին.

— Գետին ալիր են մաղում:

— Լավ խմոր կհունցեն:

— Ասում են վերի առուն տանելու յեն, վոր
խելքներին ու մկներին ջուր տան:

— Ձե, չե, ոձերի ու լորտուկների համար բաղնիս
են շինելու:

— Բանն ենա, վոր կառավարությունն ել փող ա
բաց թողել, վոր գոմ շինեն:

— Կառավարությունը գոմ կշինի, բա հո վանք
չի՛ շինիլ:

— Վայ մեր հալին. մեր ջանը դուս դա, անհա-
տական տուրքի տակ դենն մեզ, փողը հավաքեն, տա-
նեն նրանց տան, վոր դեն ածեն:

— Նլ ասում ես... Փողդ տանեն, քեզ ել ձայնա-
դուրի անեն, վոր չկարենաս, թե եդ դայդի սարսաղ
բանի առաջն ելա առնես:

— Ես գեղի չափ մենակ տուրք տամ ու մար-
դամիջում ել մարդ չլեմ, բա սա որենք ամ...

— Ծախելու յեմ, դիւի ծախելու յեմ, հոտը կըտ-
րեմ, յես ել դառնամ մի աղքատ դադո, տենամ կուլեկ-
տիմն ինձ հաց կտա, կպահի՞...

— Կտա, վոնց չե, լվացած ցորենից թխած հաց
կտա, վոր փափուկ - փափուկ ուտես:

— Շաշ խելքիդ ինչ ասեմ, նրանց ուղածն ել հենց
ետ ա, վոր որեն հացի կարոտ մնանք, սոված կտոր-
վենք, գեղն իրանց մնա:

— Ես աշխարհը սուլթան Սուլեյմանին ել չի
մնացել, դրանց ել չի մնալ:

— Սուս կաց քամին խաղար կտանի:

— Տանում ա, տանի, վախում եմ, ինչ ա...

— Կրոնեն են գոմի հիմքում կթաղեն, վրեդ ել
մի մեծ քար կդնեն. մի դենը մտիկ ե, դենը. հենց են
քանդում, կասես կրակ ըլի վեր կացած, ալաքն աշ-
խարհ ուտելիս:

— Ղոչաղ են, ախպեր, ղոչաղ. քանդելումը, խոսք
չունեմ, շատ ղոչաղ են, համա վերջն ա գովելի:

— Դանդում ենք, վոր շինենք, բիճամ...

Վորտեղից - վորտեղ լույս ընկավ մի կոմյերիտա-
կան, վոր բեռը շալակած, մշակներին հաց եր տանում:

— Ախ, ես լակոտանին, ես լակոտանին, վոր վոչ
մեծի պատիվ են պահում, վոչ պուճուրի խաթր...

— Դու սրանցից բեթարիցը վախեցիր, հրեն ե,
են վոր մըջյունից շատ են, են պիոն են, ինչ են,
նրանք իսկի հեր ու մեր ել չեն հարցնում. յաչեյկեն
ինչ ասի, նրա խոսքով են ժաժ գալի:

Պայթյուն:

Փոշու նման ծուխ բարձրացավ. քարե անձրե
տեղաց:

Գոմի հիմքը փորելու ընթացքը խանգարող սալը
փուլ յեկավ վառոդի ուժից: Մշակները միահամուռ գո-
ռացին.

— Ու... ու... ու... ու...

Հեռվում, բարձրաբերձ լեռնաշղթայի սրածայր
գագաթներից մեկն ուղեց խրվի արևի կողը, բայց հրե
գունդը խուսափեց:

— Տղերք, արեւը թոլ ելավ, յետ դառեք:

Մշակները յետ դառան գործից, շորերը գցեցին
վրաները, վոր չմրսեն: Մի քանիսը դեռ կանգնած են
փուլ յեկած սալի կողքին:

— Տեղը պինդ նստել ա, թե՛ ժաժ չեմ գալի. անյ,
թե ժաժ չես գալի, դե հիմի դնա ու վորտեղ քոնն
ասես, ենտեղ ել մերը պատմի...

— Սաղ յերկրի թաղավոր ենք շուռ տվել, սա
յեկել ա մեզ հետ բաս մտել...

— Տղերք, ասում եմ խելի ել տուն չգնանք,
կրակ - ճրագ անենք, հատեղ ել քնենք:

— Կմսենք:

— Յուրտ չի:

Այդ յերեկո, ով գիտե, գուցե մի քանի հարյուր
տարի անց, կամ թերեւ հենց առաջին անգամ, անիծ-
ված հողի վրա վառվեց կուլետիվի կրակը:

Գոմը գյուղի սովորական գոմերից չէր:
Յերկար ու մեկ ձգվել եր կզմինդրե տանիքով,
փոքրիկ աղբածակերով: Ներսը կտեղավորվեր մոտ հա -

— Ես դեղի չափ մենակ տուրք տամ ու մար-
դամիջուամ ել մարդ չլեմ, բա սա որենք ամ...

— Ծախելու յեմ, դիփ ծախելու յեմ, հոտը կըտ-
րեմ, յես ել դառնամ մի աղքատ դաղո, տենամ կուլեկ-
տիմն ինձ հաց կտա, կպահի...

— Կտա, վո՞նց չե, լվացած ցորենից թխած հաց
կտա, վոր փափուկ - փափուկ ուտես:

— Շաշ խելքիդ ինչ ասեմ, նրանց ուղածն ել հենց
ետ ա, վոր որեն հացի կարոտ մնանք, սոված կոտոր-
վենք, գեղն իրանց մնա:

— Ես աշխարհը սուլթան Սուլեյմանին ել չի
մնացել, դրանց ել չի մնալ:

— Սուս կաց քամին խաբար կտանի:

— Տանում ա, տանի, վախում եմ, ինչ ա...

— Կբռնեն են գոմի հիմքում կթաղեն, վրեդ ել
մի մեծ քար կդնեն. մի գենը մտիկ ե՞, դենը. հենց են
քանդում, կասես կրակ ըլի վեր կացած, ալաֆն աշ-
խարհ ուտելիս:

— Դոչադ են, ախպեր, դոչադ. քանդելումը, խոսք
չունեմ, շատ դոչադ են, համա վերջն ա գովելի:

— Քանդում ենք, վոր շինենք, բիձա...

Վորտեղից - վորտեղ լույս ընկավ մի կոմյերիտա-
կան, վոր բեռը շալակած, մշակներին հաց եր տանում:

— Ա՛խ, ես լակոտանին, ես լակոտանին, վոր վոչ
մեծի պատիվ են պահում, վոչ պուճուրի խաթր...

— Դու սրանցից բեթարիցը վախեցիր, հրեն ե՞,
են վոր մրջյունից շատ են, են պիոն են, ինչ են,
նրանք խակի հեր ու մեր ել չեն հարցնում. յաչեյկեն
ինչ ասի, նրա խոսքով են ժաժ գալի:

Պայթյուն:

Փոշու նման ծուխ բարձրացավ. քարե անձրե
տեղաց:

Գոմի հիմքը փորելու ընթացքը խանգարող սալը
փուլ յեկավ վառողի ուժից: Մշակները միահամուռ գո-
ռացին.

— Ու... ու... ու... ու...

Հեռվում, բարձրաբերձ լեռնաշղթայի սրածայր
դագաթներից մեկն ուղեց խրվի արևի կողը, բայց հրե
դունդը խուսափեց:

— Տղերք, արևը թուլ ելավ, յես դառեք:

Մշակները յետ դառան գործից, շորերը զցեցին
վրաները, վոր չմրսեն: Մի քանիսը դեռ կանգնած են
փուլ յեկած սալի կողքին:

— Տեղը պինդ նստել ա, թե՛ ժաժ չեմ գալի. ամյ,
թե ժաժ չես գալի, դե հիմի գնա ու վորտեղ քոնն
ասես, եստեղ ել մերը պատմի...

— Սաղ յերկրի թագավոր ենք շուռ տվել, սա
յեկել ա մեզ հետ բաս մտել...

— Տղերք, ասում եմ խակի ել տուն չգնանք,
կրակ - ճրագ անենք, եստեղ ել քնենք:

— Կմսենք:

— Յուրտ չի:

Այդ յերեկո, սվ գիտե, դուցե մի քանի հարյուր
տարի անց, կամ թերեւ հենց առաջին անգամ, անիծ-
ված հողի վրա վառվեց կուլետիվի կրակը:

Գոմը գյուղի սովորական գոմերից չեր:
Յերկար ու մեկ ձգվել եր կղմինդրե տանիքով,
փոքրիկ աղբածակերով: Ներսը կտեղավորվեր մոտ հա -

ըյուրը գլուխ յեղջյուրավոր մեծ անասուն: Ձիերի համար հատուկ տեղ եր առանձնացրած, փայտե պատով բաժանած: «Գոմ հո չի, պալատ ա, պալատ», — ասում էյին գյուղացիք ու թամաշայի գալիս:

Կոլլեկտիվը խոտը կրեց գոմի մոտ, դիզեց, լեակ դարմանի համար ժամանակավոր, ծղոտով ծածկած մի մարագ շինեց: Գոմի վերևի մասում մի փոքրիկ սենյակ իր փայլուն լուսամուտներով ժպտում է անցավորականին: Դա — նախրապանի տնակն է իր պարզ կահավորութեամբ: Մարդ ու կին յերկու յերեխայով, գյուղում թողել են իրենց գետնափոր ու բորբոսնած խարխուղ հյուղը, բառախութեան լուծը դեն շարտել ու դարձել կոլլեկտիվի հավասար անդամ:

Անասուններին խնամելու գործը մեկ կամ յերկու հոգու բան չէր. այդ պատճառով ել՝ ամեն որ գյուղից հերթով գալիս էյին կոլլեկտիվի անդամներից և ոգնում նախրապանին: Զուրը հեռու չէր. Զրի հարցը բավական դժվար էր: Կոլլեկտիվն իր հերթական, անմիջական հարցը դարձրեց առվի ջուրն անց կացնելը: Ձմեռն սկսվել էր, բայց կոլլեկտիվի բախտից խլուտաշունչ չէր. չոր էր ու արեկոտ:

Կենտրոնից ինչ-վոր ընկեր յեկավ կոլլեկտիվի պահանջով: Գյուղը գլխին է թափվել: Ինչ-վոր գործիքներ ունի ընկերը, չափ ու ձև է անում, գրում, գրում, հաշվում, նայում է ջրին, մոտը ցցված ապառաժներին, վորոնք հեղնական ժպիտը շուրթերին քարացած՝ գոմի հիմքում ընկած սալի նման, կարծես ասելիս լինեն, թե՛ տեղիներիցը չեն շարժվելու, ջրին ճամփա չեն տա, վոր անցնի անիծված հողը:

— Հարցը պարզ ա, ընկերներ, — խոսում է կոմբլիշի քարտուղարը, վոր միաժամանակ և կոլլեկտիվի նախագահն է: — Դուք կամաց-կամաց քանդեցեք ես հեշտ տեղերը, յես գնամ քաղաք: Կգնամ ընկերներին կասեմ, վոր մեզ բարութ ու ֆիթիլ ա պետքը, վոր մեզ մի մասնագետ ա պետքը. թող տան:

Կասեմ, հարցը պարզ ա, մինչև գարունը ես առուն պետք ա մեր գոմի կողքովը քնքշավով գնա, թե չե հո... են վոնց են ասում, հա, սոցիալիզմի գործը խաբար ա...

Մի քանի հոգի ծիծաղում են.

— Սոցիալիզմը ես առվի ջուրը փոխելու մեջ ամ...

— Հա, բա՛ս. հարցը պարզ ա, ես ջուրը վոր տանեմ, հողն ավազ անեմ, սոցիալիզմից ինչքան մեր գեղին, մեր կոլլեկտիվին բաժին ա ընկնում, ետ բաժնից մի մասը կատարած կըլենք, բա վոնց գիդաք...

— Եզ ջուրը մեր բաղ ու բոստանին ել պետք ամ, թե չե, — մեջ է ընկնում կուլախներեց մեկը: — Եզ վոր տանեք, բա ես խալխի բաղն ու բոստանը չորանա ելի... Բանց տանում եք մկների բները ջրեք, թե ինչ ա. ո՞վ գիդի, յերբ եք մի դարաղի (դղում) երես տեա. ո՞վ գիդի, յերբ եք մի դարաղի կան, ելի... Մարնալու, հաղիք ենա շեն ու լեն բաղչեքը կան, ելի... Սարժին - կարգին ծառն ու վազը չորացնում եք, թե ինչ ա կոլլեկտիվը դեռն ու քարը ծաղկացնելու յամ...

Առարկությունն առաջին տպավորությունը գործեց. խալխի մեջ դրբոց ընկավ.

— Մի մատը ջուր ա, ամառն իսկի գորտի մեջքն ել չի ծածկում, ուղում եք ես խալխի տան լոբին ու խխարն ել կտրեք...

— Հարցը պարզ ա, ընկերներ, սրանք ուզում են մեզ խանգարեն. բաղ ու բազլեն մենակ դրանցը հո չի, մենք ել ունենք. ջրի կեսը կտանենք, կամ հերթով կբանացնենք, մենք հո խալխի դուշմանը չենք:

— Եդ վիճից կըլի... Ավելի լավ ա մի՛նը կուշտըլի, քան թե երկուսն ել սոված մնան. ջուրը վոր կեսանք, մեր բաղերին հերիք չի աշիլ, ձեզ ել պետք չի գալ, կես ճամփին կցամաքի, տեղ չի հասնիլ:

— Դրա համար հեշտ միջոց կա, — խոսում ե մասնագետ ընկերը: — Նախ կարծում եմ, վոր ջուրը յերկսիշ ել կբավարարի, յերկրորդ՝ կարելի յե յերկու խոշոր ջրամբար շինել, վոր մինչև անգամ յերաշտի ժամանակ ել ջուրը բավականանա:

— Լավ ա ասում, լավ ա ասում, լսվ ա ասում, խելոք զրից ա...

— Կուլակները գուլխները պտտացնելով դրադ են քաշվում, նստում քարերի վրա, փնթփնթում, կամ վեզը խել տված յերեսաների նման անզոր սպառնալիքներ կարդում:

Քլունգը, նիզը, դադման ու թին գործի յեն անցնում: Մասնագետը ցուցմունքներ ե անում: Ապագա ջրանցքը դեռ թղթի վրա յի: Նախագահը մեկնում ե կենտրոն:

Պահեստում ունեցած վառոդն ու պատրույգն իրենց գորդեթյունն են ցույց տալիս: Համառ ժայռերը խոնարհվում են, փուլ են գալիս: Պայթյուն պայթյունի յեռելից: Դրդում են քարայրերը: Համբուրդեթյունը հատած մի քանի հողի, մաքրած տեղի վրա յեն անում ջուրը, վորը հոսում ե ու դեմ առնում քարախուժերին: Բահի կոթով չափում են դժվար տարածությունը.

— Եսքան տեղը վոր քանդենք, նրանից դենը ջուրն իրան - իրան հաղ կանչելով ա վազելու...

— Բանիդ կաց, սոցիալիզմի ճամբեն թամզի, — կատակում ե ընկերներից մեկը, հիշելով նախագահի խոսքը:

Ծիծաղում են:

Պարնան դեմ, աղբակույտների չորս բոլորը կանաչ յերկաց — յեղինջ, փիփերթ, հատ ու կենտ գետնա-սուռնկեր: Զյունը նոր ե վեր կացել. գետնից գոլորշի բարձրանում, կարծես հողը թափահարում ե իր փոշոտ մուշտակը: Անիծված հողի վրա շարժում կա: Մարդիկ, անասուններ: Ծտերը քուշուջ են անում փեյի-նում, իսկ ծիծեռնակը մկրատ-պոչը բացած՝ պտույտ-նում, իսկ ծիծեռնակը մկրատ-պոչը բացած՝ պտույտ ե անում գոմի չորս բոլորը, բնի տեղ ե վո-պտույտ ե անում գոմի չորս բոլորը, կեռ ու մեռ հորոնում: Առվից բերած բարակ արխը կեռ ու մեռ հոսում ե, խոխոջում, հեռվից թվում ե, թե արծաթե գոտի յե շարժվում հողի իրանով:

«Հողը պետք ե շուռ տալ», — ասում են կուլեկ-ախլի անդամները, բայց հերկելը դժվար ե, մանավանդ, վոր դաշտային աշխատանքներն սկսվելու վրա յեն. վոր դաշտային աշխատանքներն սկսվելու վրա յեն. կուլեկախլը հազիվ թե կարողանա իսկական վարկա-հողերը հերկի: Տրակտորն ուղանում ե: Կուլեկախլի անհողերը հերկի: Երակտորն ուղանում ե: Կուլեկախլի անհողերը հերկի:

Համբերից մեկը մի առաջարկություն ե անում. — Ընկերներ, յեկեք մի բան ասեմ, վրես ծածաղեք վոջ: Ասում եմ յեկեք մի հինգ փութ կարտոփից ձեռ քաշենք, ես փեյինը շաղ տանք հողի յերեսով ու ետ փեյնի տակին տեղ-տեղ մի-մի հատ կարտոփ դնենք ու խողերը մեջն անենք: Խողերը հողը կքան-

դեն, եստեղ - ենտեղ կարտոփ կգտնեն, համին կընկնեն, հենց կիմանան թե սաղ հողը կարտոփով լիքն ա, կքանդեն ու կքանդեն, հողը մի քիչ տակնուվրա կանեն, թնչ եք ասում:

Խեղճի մոտիկ բան ե:

Բննում են, համաձայնվում:

Մեկ ուրիշն առաջարկում է «քարը ճղող, նյութ քաշող» ծառեր տնկել — ինչպես փռնի, ախացի:

— Փռնին բանի պետք չի, համա լավ կըլի ախացի ու լորի տնկենք:

— Յեկեք ջրո թթնի ել դնենք, բալքի բռնում ա, տերևը շերամին պետք կգա:

Խողերը «հերկում են» հողը: Հերկում են և բահն ու քրունդը:

Ծառատունկ ե:

Մեծ ու փոքր բերում են ու բերում դանաղան շյուղեր, շարքով տնկում, փոսերի մեջ շալակով բերած սև հող լցնում: Յերեսաները մրջյունների պես պարտաքնող հող են կրում փոքրիկ կողմններով. ամե - նից շատ նրանք են փորփրում, տնկում ու խնամքով ծփծփում հողը: Չորս բոլորն ախացի յե շարված, մի մասը թթնի, մի մասն ել լորենի: Տեղ են թողել նաև ապաղայում մեղատու ծառեր տնկելու համար, յեթե առաջին փորձն աջող անցնի:

Անխձված հողի վրա ճիպտաներ են միայն յերե - վում, ծառեր են դառնալու թե վոչ...

«Կոլեկտիվի քոլը» ծաղրի առարկա յե դարձել: Ծաղրում են հակառակորդները, թույն են թափում «բաղերի ու բոստանների ջուրը կտրողներին» վրա:

— Ասում են կոլեկտիվի քոլումն արջ ա յերե - վացել, վոնց ա լելու ես գեղի բանը...

— Դու արջն ես ասում. բա վոր հրեն են ջրի վրա տախտակ քաշելու զավոդ են բաց անում...

— Մեկել որը մի ծառ են կտրել տասնհինգ ար - շին հաստ. քաղքիցը վագոն են ուղել, վոր դարկեն զագրանիցա:

— Ասում են կոլեկտիվը պայման ա կապել Թիֆ - լիսի հետ, վոր սաղ քաղքի ձմեռվա վառելիքն ետ քո - լիցը տա...

«Կոլեկտիվի քոլում», իհարկե, արջներաց, բայց նրա փոխարեն մեղու յերեաց, շերամի վորդ յերեաց:

Յերեք տարվա պատմություն ունի մեր կոլեկ - տիվի «անտառը»: Գարնանը ծաղկում են լորենիներն ու ախացիները մատղաշ, վայրի թթենին բաց է անում իր աչքերը, փռում նուրբ - կանաչ տերևները. առվակը ջուր է տալիս նոր բանջարանոցին:

Հեռվից, շարքով շարված ծառերի տակ, յերեում են գույնզգույն փեթակներ. յերկար նայելուց թվում է, թե շարժվում են նրանք, կարծում ես թե կոլեկ - տիվի հորթերն են. բայց... այժմ այնտեղ այլևս գոմ չկա: Գոմը կատարեց իր գործը. նա այժմ վերափոխ - ված է չոր ու ցամաք լուսավոր մեծ սրահի, յերկար ու մեկ ձգված մաքուր տախտակներով: Նախկին գոմի ճակատին մի ցուցանակ կա — վրան իրար գրկած մուրճ - մանգաղով ու կարմիր տառերով — «Շերամապահակաճ առել — Մուրճ - Մանգաղ»:

Գյուղի բոլոր կանայք շերամաբտելի անդամ են։
Տարե-ցտարի ավելացնում են թթենիների թիվը, վոր
բավարարի պահանջին։ Կոլլեկտիվը ձեռք է բերել հի-
սունից ավելի փեթակ։ Կոլլեկտիվի անդամներից մեկն
արդեն մասնագետ է մեղվաբուծության։ Անխժված հողը
կանաչել է, ծաղկել, կյանք առել...

Կյանք է առել նաև կոլլեկտիվը։ Գյուղում գրեթե
այլևս միջակ տնտեսության տեր մարդ չկա, վոր կո-
լլեկտիվի անդամ չլինի։ Ել չենք խոսում չքավորի մա-
սին, վոր կոլլեկտիվի հիմքն ու շունչն է։

Տրակտորն եկել է արդեն. նա շուռ է տալիս, խոր
ակոսելով, վոչ միայն հողը, այլև մարդկանց ուղեղը։

Տրակտորը նոր յերգեր է բերել իր հետ։ Յերգում
են պատանիներն ես ու են թմբի գլխին, ձորում, ան-
տառում, վար անելիս, կով արածացնելիս։

Կոլլեկտիվ արհ եմ արել,
Կուլակին դարդ եմ վարել,
Կոլլեկտիվ փող հավաքել՝
Ֆորձոն քաղկոն եմ առել։

Կուլակի ուսին կսանք,
Տեսե՛րի կուզին կսանք,
Վա՛խառուն քե մոսե՛նա՝
Կրո՛նեմ վզին կսանք։

Գարնանացան մեմ կանեմ,
Կուլակ աչդ կհանեմ,
Ինչ վոր աղբա՛ս, բա՛սակ կա՝
Մեմ կոլլեկտիվ կսանեմ։

Գյուղամիջում, մամուկալած յեկեղեցու բակում,
գերեզմանաքարեր կան շիկավուն. փորագրված յերկա-
թագրերի փոսերը լցվել են քարախեթով, սևացել, դեժ-
վար է կարգացվում, բայց հայտնի յե, վոր «ազնվա-
կան տոհմի» դամբարան է։ Տապանաքարերն այժմ
նստարանների տեղ են ծառայում պարապ մարդկանց
ու ծերերի համար։ Ահա այդ քարերի վրա յե, վոր
նստոտել են մի քանի հոգի, ջրակալած աչքերը տրո-
ւում են, նայում դեպի անխժված հողը, վորի վրա կա-
նաչ ծառերն ու ծաղիկները խաղ ու պար են բռնել
արևի, մեղվի, ջրի փայլի ու թռչունների հետ։

— Ախպեր, արին, ելի, իրանց ասածն արին...

— Բա չեյիր հավատում...

— Յես ի՞նչ գիտեյի, թե դրանք Մանաս - բեդիցն
եկ ավելի հունարով են։

— Կոլլեկտիվ ասածդ վոր կա, հին առակի նման
ա — «գեղ կանգնի, գերան կկոտրի»։

— Հը՛. միտքդ հո չի ծովել. չըլ՛ դու յե ես ու -
զում կոլլեկտիվ մտնես։

— Միթամ դու չես ուզում...

— Մեղքս ի՞նչ ծածկեմ, ախպեր, թե ընդունեն
վաղ տալով կզնամ. ես բանը տենողը քոռ պետք ա
լլի վոր չուզենա։

— Բա վախում չե՞ս կոլլեկտիվի քոլի արջերը
քեղ ուտեն...

1930 թ., ապրիլ

Թիֆլիս.

ՆՈՐ ՏՈՒՆԸ

Նոր շինած խճուղին կեռամաններով ձգվել է չվանի պես, բայց մենք գնում ենք կարճադաք արահետով — վոլորապտույտ ու քարքարուտ:

Բարձրանում ենք դեպի գյուղը, վոր ձորի մեջ ծվարել է, կարկաչուն առվակի ավերին, թաղվել կանաչ պարտեզների ու բանջարանոցների մեջ: Տները հեռվից աչքով են անում մեզ ու նորից գլուխները թազցնում կանաչների գրկում:

Շողը նեղում է: Ոգոտոսյան արևի սուր ու շիկնած ասեղները խրվում են առատորեն մեր մարմնի մեջ ու շանթում անխնա:

— Գլխիս մեջ կարծես հարսանիք լինի... — գանգատվում է ընկերներից մեկը:

— Իմն ել է դմբմբում դհոլի նման... — հաստատում է յերկրորդը:

— Ականջներս վշշում են, կարծես ուղեղս վարար դետի նման հոսելիս լինի նրանց միջով... — ասում է մյուսը տալի, թե ուր վոր է կիջները ձորը, կլողանանք գետում:

Ճամփան միայն ինձ է ծանոթ. վայրերը հարազատ...

— Եսպես վոր երվեցինք, ջուրն ընկնենք թե չե՛մխլելու ենք...

— Պողպատ ենք դառնալու, պողպատ...

Մոտիկ ծառին մի ճպուռ աջապես է գլել իր միապաղաղ ու ականջ ծակող «յերգը», վոր քիչ է մնում ուղեղներս պայթեցնի:

— Ծչա՛, ճչա՛, հրես միջիցդ կճաքես դատարկ ճանր ասող կերենակու նման...

Իջնում ենք խեճերի հետ կռիվ տալով:

Ջուրը տեսնելուն պես, բաղերի նման թափվում ենք գյուղ: Տրամադրով թյուններս լավ ե. խաղ ենք սկսել ջրի հետ:

Վերի շեռտում մի պատանի, վորին չենք նկատում, գլի ձախով յերգում է.

«Ճամփեք շոեղ ա,
Տրակսոր դոեղ ա,
Կուլակի վագեն բմեղ ա,
Բաճակի քարին ա»...

Սրում ենք ականջներս, վոր լավ իմանանք թե ել ինչ կասի:

Ջրի քչքչոցի ու տերևների սոսափյունի միջից լսում ենք.

«Ես բեք բարին ա,
Ծիրանը ծառին ա,
Կոխոզ աղջիկ կարմեղ ա,
Տանելու քարին ա»...

Պատանին վողեորությամբ կրկնում է վերջին յերկու տողը, ձգելով ու ծոր տալով...

Ո՞վ է պատանին, ի՞նչ է շինում շուտում... Միևնույն չի... նոր կենցաղի յերգերը տարածողներին մեկն է...

**

Հովասուհի ծառուղին մտանք. շուտով կհասնենք գյուղ: Շամփի աջ ու ձախ կողմերում փռված այգիներին ժպտում են մեզ՝ զանազան մրգեղեններ, ու փյուռի թեթև հպումից — մեզմ գլխով անում...

— Տեսնես ես տղի յերգած «կոլխոզ աղջիկն» ես խնձորի թշի չափ կարմիր կլինեմ... — Կատակում է ընկերս ու մատը մեկնում դեպի խնձորենին, վորի վրա խնձորը տերեխց շատ է յերևում:

— Յանկապատը չանցնեմ ու մի քանի հատ «ե-կա» անեմ...

— Տես, կարմա հենց անես, վոր ել գյուղ մտնելու յերես չունենանք...

— Ի՞նչ կըլի վոր... Մի-յերկու խնձոր ա, ելի...

— Ընկեր... — Լսվեց մի բամբ ձայն, պարտեղից՝ Կանգ առանք:

— Մի քիչ նստեցեք ետ ծառի շվաքումը, մի-քանի խնձոր վեր գցեմ ծառիցը, բերեմ, բողաղներդ թաց արեք...

Մտքներումս շնորհակալ լինելով՝ նստում եմք, սղասում: Անշուշտ, պարտիզպան ընկերը լսել է մեր «ե-կա» անելու զրույցը:

— Մոտ յեկեք, տարեք... Լսվում է նույն ձայնը:

Յանկապատի վրայով դողացող մի ձեռք պարզել է դեպի մեզ խնձորով լի փափախը: Տարեքն առած մարդ է յերևում, բայց դեմքն առույգ, թարմ, թուխ ու կարմիր միախառը:

Շնորհակալ լինելով՝ խնձորները գրպանում ենք: Ընկերս պինդ կծում է մի հատը, յերեսիս խփելով խնձորի թթվաշ հյութը: Մյուսն անպայման ուզում է կատակ արած լինի պարտիզպանի հետ.

— Ես խնձորը կոլխոզի՞նն ե...

— Ձե... Ո՞վ վոր ուտի՝ նրանն ա...

— Ե՛դ չհարցրի, բիձա, ուզում եմ իմանամ ես այգին կոլխոզի՞նն է, թե՞ մասնավորի...

— Ես հենց ասեմք մասնավորի յա, խնձորը կուլ չի գնա, թե՞ դեն կածես... Ինչի՞դ ա պետքը. դարձե՞ մարդ, քաղքի մարդ, գեղի գործերին ի՞նչ ես խառնվում, բախ...

— Ել ինչե՞ս յես նեղանում, բիձա ջան, վատ բան հո չասի. ուզում եյի տեղեկանամ, թե ես գյուղում կոլխոզ կա՞մ, թե չե...

— Հա... եդ ուրիշ բան ա. եդ հարցրու: Կա, ինքն ել շատ լավիցը. կգնաք, կտենաք. յես ել եմ կոլխոզ, համա բաղս հալա մասնավոր ա...

Ընկերներիս նշանով հասկացրի, վոր հեռանանք, թե չե՝ պարտիզպանը թամամ մեզ ձեռք եր առնելու է գյուղով մին պատմի:

Ընկերս տաքակուսել է.

— Ախրը եդ վճնց... իմացա՞ք ինչ ասեց. թե՛ «յես կոլխոզ եմ, բաղս մասնավոր ե, խնձորն ել ուտողինն ե», արի ու հասկացի...

— Գնա, գնա, եղպես բաներ դեռ շատ կլիմանաս գյուղում...

**

Գյուղ ենք մտել: Պարապ մարդ չկա գյուղում: Կալերի թունդ ժամանակն է. վորը կալում է, վորը

Թեղ անում, վորը քամում... Մեծ ու փոքր աշխատում են տենդորեն. մարդ ամաչում է, թե բան հարցնի, խանգարի. ժամանակ չունեն զրույցի: Աչքի տակով նայում են մեզ ու շարունակում իրենց գործն անընդհատ:

Ընկերներս հետաքրքրվում են գյուղական այդ ձևի աշխատանքներով. նոր են տեսնում. անծանոթ աշխարհ են ընկել... Մեկը մինչև անգամ ֆոտո-ապարատը հանել, դանադան տեսարաններ է նկարում...

Իսկ յես նայում եմ չորս բոլորս, զարմանում. ինչքան է փոխվել իմ տեսած գյուղը... Մանկությունից սկսած՝ ճանապարհ դեպի քաղաք, այդ գյուղի միջով է անցել:

Գետնափոր տները խարխիվել են, քանդվել. շատերի մոտ նոր, յերկհարկանի տներ են կանգնած, բարձր ու լուսատու պատուհաններով, շատերի տեղն էլ հիմք է դրված քար ու կրապատ տան... Բազմացել են կղմինդրե տանիքները, վորոնց թիֆն այնքան աննշան էր մի ժամանակ, վոր մատներով կարելի չէր հաշվել. — «Բյոխվա Ստեփանի տունը, սուդյա Աբահե-մինը, Սամսոն-բեգինը, տերտերինը, բազազ Սերգո-յինը...»: Ե՛ր... Չկար: Թե թիֆլիսում աշխատող մեկ-յերկու կռիակար կամ դերձակ, ձեռնարկել էյին, նրանց տներն էլ կիսատ էր մնացել: Այսպես կոչված ներքենահարկ — պաշվալը շինել էյին ու անծածկ թողել, ուժները չէր պատել յերկրորդ հարկը բարձրացնեն...

Կումն ուսին մի աղջիկ տուն է դառնում աղբյուրից.

— Ընկեր, կարելի՞ չէ քիչ ջուր տաս, ծարավ ենք...

— Խնդրեմ:

— Շառագունելով կուժը ցած է դնում աղջիկը և ձեռքի թասով ջուր տալիս:

— Ես տները քանի՞ տարվա շինքեր են...

— Հինգ — տասը տարվա...

Ապա հոնքերը պոստում է աղջիկը, վորպեսզի ավելի կենտրոնացնի հիշողությունը, և ավելացնում.

— Հն, ելի՛ր... ինչ վոր խորհրդային դառավ մեր գեղը, են որվանից սկսած համարյա դիֆն էլ նոր տներ են շինում...

— Ուրեմն՝ խորհրդային իշխանության որով են շինված էս յերևացող տները...

— Հապա... վճնց գիտեք, մեր իշխանությունը շինարար իշխանություն է: Հպարտությամբ ասում է աղջիկը, վառ տեքերը հառելով ընկերոջս վրա, վորը ֆոտո-ապարատը պատրաստում է «գեղջիկունեն» նկարելու համար:

— Ընկեր, դու կոմմունիստ ես...

— Չէ: Կոմմունիստ չեմ, բայց կոմմունիստացույեմ... — Ասում է ու ժպտալով կուժն ուսում:

— Այսինքն՝ վճնց հասկանանք...

— Թեկնածու յեմ:

Աղջիկն ուզում է շարժվի. ընկերս ահաբեկված աղաղակում է.

— Ը՛հ, կադրից դուրս յեկավ, ֆոկլուսս կորցրի. կանգնեցեք:

— Շտապում եմ, ընկեր, վազ եմ, կալվորը ծարավ ա. յեկեք մեր կալումը նկարեցեք...

Թեթե վոսոյուն: Չարաճճի աղջիկը, կամ իր լեզվով ասած — կոմմունիստացուն — թռավ:

շինած սառը գերեզմանն է սա, մեռելների տունը, վորին մի ժամանակ յեկեղեցի էլին ասում:

Ժամանակով, այս շենքի ներսում զանազան «մեղեքներ» ու ազդեցիկներ է գնդնացրել քահանան, կրօնական ցանցեր հյուսել, վոր «հավատացյալներ» վորսա, իսկ այժմ՝ լիսածակների վրայով սարդն է խնամքով իր վոստայնը հյուսել և մի անկյունում նստած՝ լուռ ու մռնջ «ազդեցում է ասածուն», վոր ճանճեր ուղարկի...

Մեռելների տան մոտից անցնելիս, սայլապան գյուղացիներից մեկը դժգոհ փնթփնթաց.

— Ես անտերն ել ճամփի մեջ տեղը պղպղե ա, չեն ել քանդում, թե փետն ելա մի բանի պետք ածեն, դուր տեղը փոռում ա...

Գործկոմում — կատարածուից դատ՝ վոչ վոք չկար: Մեր հարցին, կատարածուն քնկոտ աչքերը արորելով պատասխանեց.

— Բրիգադ ա յեկել, նախագահն ու քարտուղարը բրիգադի հետ միասին գնացել են արևիկացի տարածեն, թե վոազ բան ունեք՝ գնամ կանչեմ, հրեն վերի թաղումը:

«Լուսանկարիչը» նորից սարք ու կարգ է անում, բայց արգելում եմ, իսկ մյուս ընկերը կամենում և խուզարկել կատարածուի ուղեղը:

— Ի՞նչ որլիգացիա յե, գիտես...

— Վհնջ չե, ընկեր, յես ել եմ առել — «Հնգամյակը - չորս տարում»:

— Իսկ ի՞նչ է նշանակում — «Հնգամյակը - չորս տարում»:

— Քաղաքից դու յես գալի, ինձ ես հարցնում...

— Ձե, հնալես, ուղում եմ իմանամ...

— Դե վոր մինչի հիմի չես իմացել, ամոթ ա, եղևանի նշանակութունն են ա, վոր կուսասկությունը, էին ել՝ խորհրդային իշխանությունը պլան են քաշել, վոր մեր յերկրումը զավոդներ շինեն, մաշինեք դարձեն գեղերը: Հա: Եդ պլանը պետք ա հինգ տարում փրջացնեն, համա կարիքը շատ ա, վոազում են, ուղում են չորս տարում վերջացնեն: Մենք ել պետք ա ոհենք, ինչով կարող ենք. ենա տունը վոր հինգ մասի, տասը մանեթ տա հա, կաթիլ - կաթիլ՝ կդառնա վորար գետ... Յանի դու միթամ գիտում չես... խոսացում ես, ելի... Թե պակաս բան ասեցի են ել դու թւմամ արա:

Ընկերս միայն կարմրելով «թամամ արեց» կատարապես պատասխանը:

— Գյուղում ի՞նչ նոր բան եք շինել ես տարի, ես օտրիկ ժամանակներում... — միջամտեցի յես:

— Նոր բանը... Հա. հրեն, մեր մուլբն ա, թե ընկեն եդ ել չի գիտում ինչ ա, բացատրեմ...

Զատ երևույթին կատարածու ընկերը վերավոր վել է «խուզարկությունից» և առիթ եր վորոնում խայթլու:

— Գիտենք, ընկեր, գիտենք, միայն ցույց տուր տեղը, եթե կարելի յե:

— Պարտքս ա. համեցեք:

Կատարածուն մի վորոք տեղ հետներս գալով՝ մատնաչեց մսուրի շենքը: Յերբ մենք մի քանի քայլ

առաջ եյինք անցել, լսեցինք, թե ինչպես մեր յետևից,
ծաղրական տոնով, կատարածուն ասաց կալվորին են-
պես, վոր մենք լսենք.

— Նեղ շալվար են հագել, հենց գիդան գեղա-
ցին ելի են առաջվա «եշ գեղացին» ա, վոր ասում եյին
քաղքեցիք, չեն գիդում, թե տասը տարի յա անց կացել,
ինչ ես իշխանությունը իրանց պեսերին ելա մարդ
շինել... Խեղք են չափում...

— Կերմը, — ասացի ընկերոջս, — ի՞նչ ես «խելք
չափում», կամ ում խելքն ես չափում...

* *

Ձորափին, լայնարձակ պարտիզում, ուր գետի
հոգն ե խաղում որնիբուն, ուր սաղարթախիտ ծառիկ
լեզվակներն են միմիանց հետ փախում, իրար լիզում, ու
անցվորին հրապուրանքով հրավիրում իրենց մոտ, տը
շունչ առնի ստվերի տակ զովաշունչ, ուր զուլար, արցուն-
քից ել մաքուր աղբյուրն ե բլթում քարի տակից, դար
բռնած կարմրավուն ու ապակեփայլ ավաղի մանրհա-
տիկների հետ, ուր խոտը — կանաչ թավիշ, բնական
փափուկ բազմոց ե դարձել, վոր թիկն տաս կամ գը-
լորվիս վրայով, ուր սարի հավքերը, թառած ծառերի
կատարներին, սիրտ յերգեր են հորինում ու քաղաքի
ժխորից հոգնած ականջներդ մեղմ շոյում, ահա հենց
այդտեղ, այդ սքանչելի, բնության ներդաշնակ տեղ-
ծաղործության ծոցում, մարդկային ձեռքը՝ պտտեն
աչիկներով, կարմրակատար մի տուն ե շինել, դուրսը
զարդարել բնության գեղեցկություններով, ի՞նչ ներ-
սը — մանուկներով:

Բակում, ծառուղու յերկարությամբ ձգված սե-
ղանների շուրջ բոլորը, ցածլիկ նստարանների վրա
նստոտած են յերեսխաները. սպասում են նախաճաշի:
Մեկը — գլավով խփում ե սեղանին, մյուսը — խաղում
ե պնակի հետ, յերրորդի գնդակն ընկել ե ձեռքից,
զլորվում ե: Գնդակի տերը մի թմփլիկ յերեսխա, ինքն
եկ համարյա գնդակ, զլորվում ե, վոր գնդակը բռնի...

Մեզ զարմացում ե նրանց անաղմուկ հանգստու-
թյունը. անկարգություն, ծվոց-ճշոց կամ ծեծկվառուք
չկա:

Ծառին հենված մի գեղջկուհի, սպիտակ խալաթը
հագին, ծիծ ե տալիս յերեսխային ու հետևում մյուս-
ներին:

Տանից դուրս յեկավ մեկ ուրիշը, նույնպես սպի-
տակ խալաթով: Կռնատակին դրած ձերմակ սփռոցը
փոքց սեղանների վրա: Յերեսխաներն աշխուժացան,
լրավեցին իրենց տեղերը:

Բերում են...

Ափսեներ, գավաթներ, հաց, կաթը, կաթնով ա-
պուր, պանիր...

Զարմանալի համբերությամբ յուրաքանչյուրն
ստանում ե, վոր հերթն իրեն հասնի. վոչ վոք աչք
չոչնի հարևանի բաժնին: «Իմը քիչ ե, նրանը շատ»-ի
կնձվ ու արցունք չկա: Կարծես մեծեր լինեն, զարմա-
նալի դիպցիալինայի յենթարկված...

Յերեք ամսականից սկսած մինչև չորս տարեկան
հասակ ունեցող մանուկներ են, միատեսակ, յերկար
խալաթ հագած: Տղան ու աղջիկն անկարելի յե ջուկել:
Կոլխոզի մանուկներն են սրանք, ապագա՝ կոմ-
մունիստական ընտանիքի «հիմնադիրներն» ու անդամ-
ները:

Չալ աչքերով մի աղջիկ, 17—18 տարեկան, թրվուում է մանուկների չորս բոլորը, կարգավորում ամանեղենը, հաց փշրում, կաթի գավաթը դեմ անում ամենափոքրերի բերանին, շոյում սրա-նրա գլուխը...

Մանկամուտը վարիչն է սա. կոմյերխտական մի աղջիկ, վոր կարծես փորձված, խնամքոտ մայր լինի արդեն:

«Լուսանկարչի» համար գործ է բացվել: Կադրեր է ընտրում, դեմքեր վորոշում...

Նստել ենք ծառի տակ, սպասում ենք նախաճաշի վերջանալուն, վոր հետո զրույց անենք մուտքի կյանքի ու ապրուստի մասին:

Ուրիշ յերկու կին, տանից դուրս են բերում թի-թեղյա տաշտակ-լողարաններ, սապոն, գոլ շուր:

Նոր տեսարան է բացվում մեր առաջ: Մանուկները հերթով իրենք են մոտենում լողացնող կանանց, վորոնք անմիջապես հանում են մանկանց շորերը, լողացնում, լվանում մաքուր, ապա փաթաթում ձերմակ սավանների մեջ ու ներս տանում սենյակ, պառկեցնում յուրաքանչյուրի համար հատուկ պատրաստված անկողնում:

Մանուկներից մեկը համառում է, չի ուղում լողանա: Փայփայում են, ձեռքը խնձոր տալիս, յենթաբերում ընդհանուր որենքին:

«Դեռ նոր է, կսովորի», — ծիծաղելով ասում է վարիչը, գրկում, համբուրում: Փաղաքշանքը զինաթափ է անում յերեխային:

Այսպես կոչված — «մեռյալ ժամն է»:

Լուսավոր, արևոտ յերկար դահլիճ է, բարձր պատուհաններով: Պատերին պլակատներ՝ մայրությանն ու մանկությանը վերաբերող:

Դահլիճում յերեք կարգ, շարվե-շար կանգնած են յերկաթե մահճակալներ — թելից գործած «մուհա-ջարներով»՝ ցանցերով: Յուրաքանչյուր մահճակալից կախված է մի տոպրակ, ուր պահվում են ամեն մի մանուկի իրերը: Մահճակալները և անկողինները միա-տեսակ են, միաչափ, գույնզգույն, բայց համաչափ վերմակ-ծածկոցներով:

Գլուխներ են յերևում միայն, հանգիստ քուն մտած խաղաղ, մանկական դեմքեր... Վոմանք գրկել են իրենց տիկնիկը, գնդակը, փայտե ձին, կովը, ու-տինե վոչխարը... և այլ խաղալիքներ ու պինդ սեղմել կրծքին, կզակին, թշին...

Պատուհաններից մեկի վրա դրված է փոքրիկ արկղ — «դեղատունը»: «Քույրը» կամացուկ շրջում է մահճակալների միջանցքներով, նայում մանկանց դեմքերին, մի քանիսի գլխատակն ուղղում ու դուրս դա-լիս գոհունակության ժպիտը դեմքին: Յերեխաների մեջ հիվանդ չկա, ամենքը հանգիստ քնած են:

Ջարմանալին այն է, վոր ամառվա այդ շոգին վոչ մի ճանճ չի յերևում դահլիճ-ննջարանում, ուր քառասուն յերեխա կա պառկած: Բոլոր միջոցները ձեռք են առնված, վոր վարակ տարածող սևաճանճերը մուտք չգործեն ննջատեսակը:

Նստած ենք խնձորենու տակ: Վարիչն է, «Քույրը», մանկամուտի, այժմյան լեզվով ասած՝ տեխնիքական պերսոնալը:

Վարիչն այսպես է նկարագրում մանկամուտի ծագման պատմությունը:

— «Հայտնարկոտան» իր գծով մեզ մոտ զարգացնում է գորգագործությունը: Կանայք, գլխավորապես կոլխոզի կանայք, մասի են գորգագործական արտեր, բայց ինչպես ամեն աշխատանքի, նույնպես և այդ գործի ժամանակ յերեխաները խանգարում են: «Հայտնարկոտան» առաջարկեց կոլխոզին, շենք հատկացնել մանկամուտրի համար, իր վրա վերցնելով մնացած ծախսերը՝ ինչպես հագուստեղենի, անկողինների և ամանեղենի կոմպլեկտները կազմելը, և այլն:

Սկզբում, շենք չունենալու պատճառով, տեղավորվեցինք դպրոցի շենքում, իսկ հետո կոլխոզը շտապ կարգով շինեց այս նոր շենքը, ուր և այժմ տեղավորված ենք:

— Վերևի խոսք ու զրույց տեղի ունեցավ, թե ամեն ինչ հանդիսատեսին անցավ: — Հարցնում է հարցասեր ընկերս, բայց այս անգամ արդեն վոչ «խուզարկության» նպատակով:

— Հապա՞... կուլակներն առիթ բաց էթողեն... Հենց վոր կենտրոնից ստացանք մահապաշտները, յերեխաների միածն ու միաշալի զգեստները, դրա հետ մեկտեղ գյուղն սկսեց փոթորկվել: Ել լինչ ասես չխոսեցին, — «Յերեխաներին խլում են, վոր ել յետ չտան», «Հենց բան են սարքում, վոր երեխան հորն ու մորը չճանաչի», «Էսոր երեխան են տանում, վոր եղբայր ել մորը տանեն», «Երեխեղ տանիցը դուրս եկավ, ել տերը չես, իրանք մեծացնելու յեն, իրանց համար ել բանեցնեն»... Ու հազար մի տեսակ նման խոսակցություններ ու պրովոկացիաներ: Առաջին օրը վոչ մի մայր չեր ուզում յերեխային բերի, բայց կոմբի՛՛՛ն անդամները միասին բերին իրենց յերեխաներին ու թողին

մեղ մոտ: Ծիծաղից թուլանում էյինք, յերբ այս կամ այն յերեխայի մայրը բան ու գործը թողած՝ մանկամուտրի շենքի լուսամուտի տակից չեր հեռանում. կամ՝ շարունակ տեղի - անտեղի ներս եր ընկնում ու հարցնում յերեխայի վիճակը... Մնքան - հնքան, մինչև վոր յերեխաներն արդեն իրենք սկսեցին սուգ ու շփվանանիլ տանը, վոր մանկամուտր բերեն...

— Միթե յերեխաները գիշեր - ցերեկ այստեղ չեն ապրում...

— Վհչ: Ամեն մայր իր յերեխային առավոտը վաղ բերում է, մեղ հանձնում, ինքը գնում իր ցերեկվա աշխատանքին, իսկ յերեկոները գործից վերադառնալիս, հետը տանում տուն:

— Իսկ ծծկեր յերեխաները...

— Սյրպիսիների թիվը քիչ է. յերեք հոգի յեն ընդամենը: Կոլխոզը վորոշեց յերեխի, ավելի փոքրահասակների, մայրերին թողնել մուտքում, վորոնք, իհարկե, չեն զրկվում իրենց բաժին աշխատավարձից. մեկն անա ընկեր Մարգարիտն է, մյուսը — Մոնան: Մնանք է՝ իրենց յերեխաներին են կերակրում և յերբորդին, վորին ծիծ տալուց այս քանի որս կկտրենք ու կովի կաթով կպահենք:

— Մթեքներն ո՞վ է տալիս:

— Կոլխոզը: Սա, ընկերներ, միմիայն մանկամուտր չե, այլ՝ կթի՛ն տուն: Յերեխայեցեք, սկզբում յերեխաներին բերում էյին կեղտոտ հագուստով, շատ անգամ անլվա և վոջոտ: Մենք, իհարկե, ինչպես այն ժամանակ, այնպես ել այժմ, հենց վոր յերեխաներին ժամանակ, այնպես ել այժմ, հենց վոր յերեխաներին բերում են, նրանց շորերը հանում ենք և մերը հագրում: Բայց եյականն այն է, վոր այժմ արդեն մայ-

ընքը մաքուր են պահում յերեսաներին և տանը՝ Մինչև անգամ այս վարակիչ որինակն անդրադառնում է և մեծերի վրա։ Տներում այժմ ավելի յեն ուշադրություն դարձնում մաքրության վրա, և սա, անշուշտ, մեր կենցաղը բարելավելու տեսակետից խոշոր նվաճում պետք է համարել։

Վարիչն այնպիսի վոգերությամբ եր պատմում, ասածները հաճախ համեմում կենդանի որինակներով, վոր թվում եր, թե առջևդ նստած խոսողը 17 — 18 տարեկան աղջիկ է, այլ՝ կատարյալ հասուն մարդ։ Իր գործը լավ գիտցող, պարտականությունները ճանաչող և պատասխանատվությունն զգացող փորձված զեկավար։

Այսպես և թող թերահավատներն անձամբ ստուգեն, անձամբ համոզվեն... Ահա, թե ինչ ձեռներով է քանդում խորհրդային իշխանությունը հին գյուղը, հին կենցաղը, և նույն ձեռներով կառուցում նորը, նոր կենցաղը, նոր տունը...

— Այստեղից մանուկներին մենք կտանենք մանկական հրապարակները, մանկապարտեզները, աշխատանքային դպրոցները, մասնագիտական տեխնիկումները, կիրթենք նրանց նոր վոգով, նոր ուսմունքով, վոր դառնան սոցիալիզմ կառուցող ժաշան ու անգավաճան աշխատավորներ... — Յեղրափակեց իր խոսքը կոմյերիտուհի վարիչը, և ներողություն խնդրելով՝ վազեց դեպի կանաչ հրապարակը, ուր յերեսաները, քնից արթնացած՝ սկսել էին իրենց խաղ ու պարը...

Մոտենում ենք, հրձվանքով նայում այդ կարմրաթուշ, առույգ յերեսաներին, վորոնք հոլի պես պտուտ-

վում են կամ գնդակի պես գլորվում, ծալի տալիս, վեր - վեր թռչում...

— Ի՞նչ ես կարծում, — հարցնում եմ ընկերիս, — ան, ես մեկը, մի քսան — քսանհինգ տարուց հետո թե՛ մարդ է դառնալու...

— Կենտրոնի պատասխանատու քարտուղար։

— Ձե՛, — վրա յե բերում «լուսանկարիչը», —

հացդ կտրելու յե, գրող դառնա։

— Իսկ նա, ան, են կողմը կանգնածը, վոր խաղին չէ մասնակցում, յերեկ կադեր ու ֆոկլորներ է վորոշում քեզ պես, վոր ապարատը ձեռիցդ խլի, լուսանկարիչ դառնա...

— Ո՛հ, լավ հիշեցրիր, սպասի նկարեմ ես տեսա - րանը... — Ասում է «լուսանկարիչը» և գլխին փաթաթում լուսանկարչական սև կտորը։

Մոտ է վազում վարիչը. մեզմ ժպտում.

— Ներողություն, ընկերներ, զրույցի բռնվեցինք, մոռացա. քաղցած կլինեք, մեզ մոտ ուտելու բան կհարվի. մի քաշվեք, համեցեք. իսկ գեղերը հարմարություն - ներ կստեղծենք, այստեղ ել կքնեք, մեր մսուրում, թեև, մսուրի համար մի քիչ մեծ էք...

Ծիծաղում ենք. առաջարկն ընդունում շնորհա - կալությամբ։

Արեւը կծկում է իր հրե թելերը. իջնում ենք առ - վակը, լողանում, ապա թարմացած վեր բարձրանում, վազելու կազմելով վազիկ անելիքների մասին։ Առա - ծրագրի կազմելով վազիկ անելիքների մասին։ Առա - ծրագրի կազմելով վազիկ անելիքների մասին։ Առա - ծրագրի կազմելով վազիկ անելիքների մասին։

հետաանոցը, վորն այժմ Թեև չի աշխատում, բայց
գորգերն ու նոր ձևի տորքերը սպասում են ձմեռնա-
մուտին:

— Հն, հն, մի եղ դադողյահները նկարեմ, հետա-
քըքեր ե... Չի լինի՞, վոր մի կնիկ գտնենք, խալիչեն
դործի, յես ել նկարեմ...

— Կլինի: — Հանգստացնում եմ «լուսանկարչին»:

✱
✱ ✱

Փոքրիկ սենյակ է, համեստ կահավորությամբ։
Գրասեղանի մի մասը բռնել են մոուլերի հաշվետետերերը,
զանազան գրություններ, մյուս մասի վրա գրքեր են,
ժուրնալներ, լրագրեր...

Վարդիի սենյակն է։ Այդտեղ ենք գիշերելու։
Հյուրընկալ տանտիրուհին գնալու յե հարևանի տանը
քնելու։ Դյուղ է. գլուղում վայրահաչ շները, հակա-
ռակորդ, կեղտոտ ելեմենտները բավականաչափ, վորոնք
բան ու գործ թողած, հազար աչք դարձած՝ մահանա
յեն փնտրում, վոր վարկաբեկին ջհեկ աղջկանը, մա-
նավանդ կոմյերիտուհիներին։

Աղաթը — դեռ մղձավանջի պես, սև փիլոնը հագին, նստած է գյուղում... Դեռ ևս շատ աշխատանք է հարկավոր քշելու այդ սևամորին...

Կոլխովի նախագահը, միջանառակ, բայց պինդ կազմվածքի տեր մի աղամարդ, բրնձեղեն գեմքով, մեղմ ժպիտը դեմքին, խմանալով մեր գալը, յեկեկ և վոր իր տուն հրավիրել գեղեցիկու, բայց վարիչն արդեն կանխել և հրաժար:

— Ես ել մեր տունն ա, փնաս չունի. ասեցի զաք, մի քիչ լեբրից — շառից զրից անենք, — ասում ե կոլխոզի նախագահը:

— ժամանակ կունենանք, մի քանի որ դեռ ես
տեղ եմ...

— Լաւ, բան չեմ տեսնում. ենքան վոք բեղամաղ չգնաք: Դե, առաջ... Լաւվի են վախտը, վոք անծանօթ մարդ եր մտնում գեղը, կամ տերտերի տունն եր հարցնում, կամ քյոխվի... չիմի... խոսքս ել լաւ չի գալի, համա... առաւին անխոտելի...

— Ուղղում ես ասես թյոթվեն հիմի դու 'յեռ...
կշկշալով ընդհատում ե վարիչը: Գ

— Վայել... քնկեր Շողիկ, բա ետ ասելու զրեց
մ... Ուզում էր ասեմ՝ շունը շան տեղը կհաբցնի. մի-
թամ հիմի հենց մարդը չի գալի, վրե ելի են դայդի
մարդկերանց մոտ ա գնում...

Խոսակցութեան նյութը լիովնում ենք: Կովկասի
նախագահին պատմել ենք տալիս քաղաքացիական
կռիվներէց ու խորհրդայնացման առաջին որերէց ման-
րամասնութեանն: Եւ լեզիւնն է:

Գաղտնի աշխատանք տանողներին և յեղեղ ընկերը, վորը սառսոսեցուցիչ զեպքեր և պատմում, յերբեմն և մոռանալով, վոր մոտը կին կա, հայոյում և ալիերով ու թալանով կառավարութեան ներկայացուցիչներին, միշտ կցելով անհրաժեշտ «ընկեր Շողիկ, ներսողութին»-ը:

Գրող թշուառները՝
 Ընկեր Շողիկը կարմրում է, մենք անհարմար
 զրույթ չունից գուրս գալու համար սուա հաղում ենք:
 Եվ՝ «Խոսքը — վաղեն կբաշխ».

— Ասած զրից աս, թե՛ «խոսքը — գաղափարը»
այսինքն... գիշերվա հենց ես վախտը կբլիբ, մարդ
պետեր զավ մոտս, դրա համար ել քնած չեյի, համա...
զլուխս իրան-իրան «հրաման քիզ» եր անում, այ,
վոնց վոր ես ընկերի գլուխը...

Ակամայից նայում ենք նախագահի մատի ուղ-
ղությամբ: «Լուսանկարչի» գլուխը ննջալուց բարձր ու
ցածր եր տնում, աշնան վերջը ծառի վրա մնացած մե-
նակ տանձի պես: Հրում ենք կողքին. ձպաղած աչքերը
բաց ե անում, նայում անորոշ ուղղությամբ, ապա
արագ-արագ թարթում, վոր համոզի մեզ, թե քնած
չի յեղել...

— Գնամ, — ասում ե նախագահը, — քուններդ
տանում ա, ջարդված մարդիկ եք, եզուց շատ զրից
կանենք:

Վեր ե կենում թե գնա, խնդրում ենք խոսքը
վերջացնի: Ամենից շատ, իհարկե, ինչպես սովորաբար
նման դեպքերում ե լինում, «Լուսանկարչին» ե թա-
խանծում:

— Դե, լավ, խաթրներդ չկոտրեմ, ղոնաղ մար-
դիկ եք: Հն. գիշերվա ես վախտը կըլեր, մին ել տեսա
զուռը ճռռաց: Տուն մտավ ես մեր հիմիկվա գործկոմի
նախագահի — Ավագի կնիկը ու հայտնեց, թե բուլեիկ-
ներն երկու ուրից գեղ են մտնելու, Ավագն ա աղը-
պրել. «պինդ կացեք, — ասել ա, — հենց մուղայիթ կա-
ցեք, վոր բռնված տղերանցը ֆուսա չտան»:

Ասեց ու գնաց:

Հենց ենա, սարք ու կարգ եյի անում, թե վեր
կենամ, գնամ տեսամ դուստդ արած տղերանց վրա ով
ա դարավուլ քաշում, մի կնկա ծվոց-ծղրոտց ա կանջովս
ընկավ: Դուրս թոա, տեսամ խավարի մեջ չորս — հինգ
հոգի իրոր յետևից վազ են տալի դրա դեսը, ես ձորի
կողմը: Յես ել վազ տվի: Ես մարդիկն ընկել են Ավագի
կնկա յետևից, նա յեկ փախչում ա ու ծվում, հարայ
տալիս: Շնահաջոցը գեղն ա ընկել... Ես ու են դուռը

կամաց ճռռում ա, համա դուա եկող չկա. վախում են.
դե, ահի-մահի տարի յեր...

Հն: Ես Ավագի կնիկն ընկավ հենց ես, ձեր տե-
սած, բաղը: Վոտն ինչի գլխավ, ինչի չգլխավ, խեղճ
կնիկը վեր ընկավ: Ես անիրավ մարդիկն ել վրա հա-
սան ու վեր ընկած կնկա ձեռներից բռնած քաշ են
տալի, վոնց վոր քաշան: Վրա հասա ու բղավեցի. —
«նչ, անամուռ շան տղեր, յես ձեր հոր... ներողու-
թին, ընկեր Շողիկ... եդ կնկանը թողեք, թե չե կկո-
տորեմ»... Ականջ չարին: Թվանքս հավալի*) կրակ
տվի. սրանք բաց թողին կնկանը, շղկված կանգ առան
մի բոպե. յես մին ել, մին ել... իբար վրա հինգ հետ
գյուլլա արի ծառերին, վոր ճղների շրթըրթոցից հենց
գլխենան, թե աշխարհս սաղ գյուլլա յա դառել ու
իբանց գլխին ա թափվում:

Յես փախան, ծառերին բուլթա արին, բայց ինչ
ողուտ... Մոտենամ տեսնամ ես խեղճ կնկա ուշքը
գնացած, ինքն ել արյունակոլով... Դեսից ղենից հա-
վաքվեցին — մարդ, կնիկ, ու պարզվեց, վոր խեղճ
կնիկը վախից, թե շատ զոռ հասնելուց՝ երեխեն փչա-
ցրել ա...

Հիմի... վոչ յետ գան են որերը... Եսա տասը
տարին թամամ ա ըլում... Ես տարի վոր խոսք բաց-
վեց, թե վորտեղ շինենք մանկամսուրի տունը, ասե-
ցի. — «ընկերներ, յեկեք մեր Ավագի են նահատակ
երեխի տեղը՝ ես բաղումը շինենք»: Եղպես ել արինք:
Ես բաղի տիրոջ նաղլն ել... շատ ա յերկար, եզուց թե
ժամանակ ըլի, կպատմեմ: Բարի գիշեր»:

*) Ողում:

Նախագահն ու ընկեր Շողիկը գնացին, իսկ մենք
դեռ յերկար ժամանակ չեյինք կարողանում քննել,
նախագահի պատմածների խորը տպավորությունների
տակ:

Լույսը նոր եր բացվում, յերբ լսեցինք, թե ինչ-
պես կոլխոզի կանայք մանուկներին բերում են, հանձ-
նում մատրի խնամքին, վոր իրենք գնան դաշտային
աշխատանքների:

Լվացվիլիս, հեռվից լսեցինք իրար յետևից տաս —
տասերկու խուլ դղրդյուն...

Դժւմ... դժւմ... դում, դում, դժւմ...

Մեր հարցին, ընկեր Շողիկը պատասխանեց, թե՛
մեծ գետի վրա ելեքտրոկայան են հիմնում, բանվոր-
ները քաղ են պայթեցնում կայանի համար...

Նոր տան — մանկամուտրի բախում սկսվել եր ժիր
ու նոր խաղ՝ մանուկների հետ...

Շնորհակալ լինելով մեզ ցույց տված հյուրընկա-
լության համար, մենք շարժվեցինք դեպի կոլխոզի՝
սարի կողմը գտնվող արտերը: Նախագահն եկել եր
մեզ առաջնորդելու:

1930 թ., նոյեմբեր.

Թիֆլիս:

Ճ Լ Կ Ո Ւ Տ

Տնե - տուն վոր ման գայիր, դույնը տեղը մարդ
չեյիր գանի գյուղում:

Բոլորի դեմքը դեղին եր — նոր գալիք՝ գցած մոմի
պես, ականջներն սպիտակ — մեկ որական լուսնի նման,
աչքերը՝ սովորականից ավելի դուրս ընկած խուռչնե -
րից, վրայի կարմիր արնաթեկերը ցամաքած, կապտած,
բնի մեջ թեք ընկած ծիծեռնակի՝ ձվի պես, բիրեն ան-
փայլ, պղտոր, վրան փառ քաշած ճահճի ջրի նման:
Հայացքը խամրած, անորոշ: Թվում եր, թե հետք խո-
սողի ուղեղը բարացել և, միտքը չի գործում:

Պատանիների դեմքը վաղածամ ակոսված, թե՛
մոխրի մեջ խորոված սերկերիկ կլեզի նման կնճռոտած,
վիզն այնքան բարակ, վոր դուրս կարծես տանձ լի-
նեք, գլխովայր հենված իր կոթին: Այստակները ցըց-
ված — լզար ձիու գավալի նման, կզակը սեպի պես
տափակ ու սուր, վոր շարունակ գողգողում եր վարեկ
բառ արտասանելիս:

Ատամները չխկչխկում են ծնոտի թուլությունից,
յերբեմն լեզվի ծայրը կծելով: Բերանից անախորժ հոտ
և գալիս: Շրթունքները բարակ են, լեզակի դույնի,
ծաղալով են բաժանվում իրարից՝ խոսելիս, վորի

ծածկված, մյուս յեղանակներին ցեխի մեջ կորած, իսկ տներն մոտ կուտակված գոմաղբի — փեյնի մեջ ձիու վրա կկոտրի:

Գյուղի առաջով հոսում է պղտոր գետը, վորն ամբողջ յերկարությամբ, յերկու կողմից, ձգված են այգիները և բանջարանոցները, ապա վարելահողերը:

«Հողը — վոսկի յե» այստեղ, ինչ սերմ գետին գցես, կաճի, կզարգանա, փարթամ տեսք կունենա: Խաղողից սկսած — ինչպիսի միրգ կամ պտուղ սիրտդ ուզի՝ այստեղ կա, լի, առատ, համով: Կեռասն ու թուֆը հենց վոր աչք բանան, շրջանի գյուղերից կթափվեն այստեղ, կառնեն, կտանեն: Ամառվա արևմուտին խընձորենիները, տանձենիները, սերկելիները և այլ ծառեր ձգնակոտոր են լինում բերքի ծանրությունից, թվում է, թե միրգը տերեւից շատ է:

Գետից առուններ են անց կացրել նաև դեպի վարելահողերը, վորոնք պարարտ են, բերքատու: Յեթե ուրիշ գյուղերում հողը մեկին — հինգ կամ վեց է տալիս, այստեղ մեկին — քսան — յերեսուն: Արտը մարդաբոյ, հասկերը տըռուղ, հատիկները խոշոր: Արտը յերբ «հորանց է գնում», կարծես ծովն է լիկվում թեթև քամուց: Հողը պարարտացնելու կարիք չի գգում, պարարտանյութ պետք չի. գետը սարերից ու ձորերից, վերի գյուղերից ու դոմերից՝ քշում, բերում է հազար ու մի տեսակի պարարտանյութ, փռում այգիներում ու դաշտերում: «Գետը — վոսկի է բերում»: Բայց...

Բայց այգիների ու դաշտերի ծայրամասերում, առունների ու դետակի ծանծաղուտ տեղերում, բազմաթիվ ճահիճներ կան, վորոնցից ամենամեծը — ճկուտը բռնել է — մոտ յերեք որավար տեղ: Զուրն այստեղ

հարյուրավոր տարիների ընթացքում լճացիլ է, տիղմը շերտ-շերտ նստել: Յեղեգնուտ է անանցանելի, կամ ինչպես տեղացիներն են ասում — «ղամշկուտ», «ղարզվի քոլ», «գորտերի դաշա»:

Սակայն միայն գորտերը չեն ճկուտի բնակիչներ. պտուղ վխտում են ամեն տեսակի ճահճային կենդանիներ ու բզեզներ, իսկ ամենից թունավորը նրանցից, ջերմ ու տենդի — մալարիայի մոծակը:

Ժամանակով, ինչ-վոր ուս անցվորական կանգ է առել գյուղում, հիացել փարթամ այգիներով ու դաշտերով, բայց ճկուտի մասին ասել է. «Յեթե դուք այդ ճահճի գլուխը չոտեք, նա ձեր գյուղի գլուխը կուտի»: Ասել է ու անցել առանց կարգին բացատրելու իր միտքը, իսկ գյուղացիք ծիծաղել են, ծաղրել շաշ ուսումնականին և...

Յեւ տարիներ շարունակ գոհեր ավել ճկուտին, վորն իրոք քիչ էր մնում «գյուղի գլուխն ուտի»:

Խորհրդային իշխանության առաջին անելիքներից մեկն այն յեղավ, վոր գյուղում դպրոց բաց արեց: Բայց, ինչպես ասում են, «շաբաթն ուրբաթից շուտ յեկավ»: Վարժապետը գյուղ մտնելուց մի շաբաթ անց, հիվանդացավ մալարիայով ու գնաց:

Ասենք, առաջ էլ այգիսի մի դեպք էր պատահել: Գյուղացիք մի տարի դպրոց էլին բաց արել, բայց դպրոցը դպրոց չեր յեղել, այլ կատարյալ հիվանդանոց: Եդ որից էլ, գյուղը վորոշել էր այլևս «անտեղի փող չուրը չթափել»:

«Ես իշխանութիւնը թե դոչադ ա, թող ես ցալի, ես կոտորածի առաջն առնի», — ասում է ինն գլուղացիք ամեն մի ժողովում:

Իշխանութիւնը շրջանի կենտրոնում բաց արեց հիվանդանոց, յերթեկ հիվանդների համար: Սա արդէն միանգամայն նոր բան էր: Մալարիայի ձեռք տապալով գլուղն ամենից շուտ և ամենից շատ թափվեց բժշկի գլխին: Գալիս էին ու գալիս: Հիվանդանոցի վրա էին թափվում, ինչպես վոչխարը — աղի: Բժիշկը վորոշեց հետադոտել շրջանը: Մոգական լապտերը վերցրած շրջագայում էր, դասախոսութիւններ կարդում, բացատրում: Մի անգ թոքախտի ավերածութիւններին մասին եր խոսում, մի այլ տեղ — տիֆի, իսկ մեզ ծանոթ գլուղում նա յերկար կանգ առավ մալարիայի վրա:

Մութն է: Կալի սրահի — կալապանի տակ, մոգական լապտերն իրար յետեից ցույց է տալիս մեծացրած մոծակները: Վողջ գլուղը կալն է թափվել: Նայում են մոծակներին, ծիծաղում, բացականչութիւններով ծածկում բժշկի զրույցը:

— Հլա - հլա, են անտերի քթին մտիկ, քթին...

— Բա հլա վոտներին, վոնց ա չարդախ արել...

— Ընկեր բժիշկ, դրանցից ինչքան ուզես՝ մեր ճիւղտը լիքն ա...

— Եսոր ծառի տակին, հենց ենա աչքս կաշելու վրա յեր, վոր մինն եկավ ու քթիս ծերին վեր յեկավ. անտերը հենց կծեց, վոր հրես տեղն ուռել ա, կարմրել...

— Հենց այդ կարմրածի մեջ է մալարիայի թույնը, — բացատրում է բժիշկը:

— Յանի դա յիլ ոճի պես յաղու (թույն) ունի...

— Հա, բա... յերեակայի՜ր՝ ընկեր, վոր ոճի թույնից աղատվելն ավելի հեշտ է, քան մոծակի...

Գլուղացիք, վոր առանց այն ել կասկածով ու թերահավատութեամբ էին վերաբերվում բժշկի զրույցին, այս ել վոր լսեցին, ել չհամբերեցին: Գրքի՛ջ բարձրացավ, ծաղր ու ծանակի ծայրը բացվեց:

— Վայե՛... Հրես մի ոճ պտեմ գցիլ եդ դոխտուրի ջանին, տենամ վոնց ա աղատվում ձեռիցը:

— Ես ինչ դա զրիցն սկսել ա, ել պակասը - պակասը մի ոխտն - ութ մլակ կծած կլի ինձ, բա ի՞նչ եմ մեռնում...

— Ըն՛ը, հրես մինն ել ծմբալով վեր յեկավ թուշիս:

— Դոխտուրի մաշինի ծակիցը չլի՞ յեկած...

— Արա, մի քիչ խոտ կրակեցեք ծուխն եդ անտերներին թակի, կորչեն եդ մարդակեր հարամիները...

— Ե՛... զրից ա, ասում ա, ելի... հենց ա դուս բերում, կասես մլակն ոխտը գլխանի վիշապ ա...

— Կարում չեն թե բժշկեն, մահանեն մլակներն են բռնում:

Ղժվժոցն ընկել է: Գլուղիւորհրդինախաբահը, վոր ժողովը կառավարում է, նա յիլ է հագիլ իր ծիծաղը զսպում: Բռնանում է իր կամքի վրա, զոռով լուրջ դեմք ընդունում, վոր չփոթկա:

— Տաղ արեք, ես մարդն իր զրիցը վերջացնի, — սաստում է նա. մի փայտով խփում սյունին: Վոչ զանգ կա, վոչ սեղան:

— Բո՛լ ա, բո՛լ ա, եգուց թուր ու թվանք կառնենք, մլակի վորս կգնանք, կկովենք, վոնց վոր դոխտուրն ա հրամայում:

— Տենաս ես գիտնականնին խի՞ յեն եսքան շաշ
ըլում... —

— Մարդ իմանա — մլանին ինչ ա թե իրան մարդ
սպանելն ինչ ըլի. մլանն ել մարդ կսպանի... առում
ա, ելի...

— Բռնեմ մի հաղար հատ սաղ-սաղ կուլ տամ,
տենամ հլա ինձ մի բան ելա պատահում մ...

— Չասեմ թե վարժապետին ել մեք գեղի մլակ-
նին խռիկ տվին:

— Տը՛գզ... դենը վախի, մլակի պուլեմյոտն
եկավ...

— Տղեք, խաբարը ճկուտն ա հասել, ինչ վոր
մլակ կա, հրեն թուր ու թվանք վեր կալած գալիս են,
փախեք, գլուխներս աղատենք, թե չե սաղ գեղը սրբե-
լու յեն...

* *

Բժշկի գրույց - զեկուցումը ծամոն դառավ ընկալ
գյուղի բերանը: Ծամեցին, ծամծմեցին, ծաղրեցին,
բայց և աջնալես գիտության «թույնը» տեսել եր ի՞նչ
գործը, վարակել եր:

Գյուղացին մինչև չփորձի, չշոշափի, իր կաշվի
վրա արդյունքը չզգա, չի հավատար, թեկուզ գլուխն
ամեն որ գիտության խոսքով վնասա:

Գյուղը կպել և մոտակա սարի լանջին թառած,
կամ բարձրաբերձ լեռան գլխին պառավի նման կկզած
ավերակ վանքին ու մզլած մատուռին: Հիվանդին տա-
նում են ուխտ. պահում մի շաբաթ: Մաքուր լեռնային
ողկց ու հովառուն անտառի գեփյուռից հիվանդն ուշքի
յն՝ գալիս. սառն աղբյուրի ջուրը և լավ սնունդը ժա-

մանակավորապես խեղդում են մալարիայի թույնը.
հիվանդը վոտի յե կանգնում, թշերը վարդաջրով ներ-
կվում են, ծնկները պնդանում: Առողջ է: «Վանքը
բժշկեց», «մատուռն աղատեց», այսպես և համոզվում
էր. դա՛հար, վորի հավատն ել ավելի յե ամրացնում ու
մեկտում վանքի սպասավորը ծեր, վոր չգիտե ինչ բան
և մալարիան — «վանքի շնորհիվ»:

Ծիծաղով բացված դարունը սղի ամառ և դառ-
նում գյուղի գլխին: Դեղը չի ոգնում, իսկ ճկուտը չի
ցամաքում:

Ցեկավ գյուղատնտեսը. նա նույն բանն ասաց,
ինչ վոր բժիշկը: Բայց սա մի նոր բան ել արավ.
մանր-մուշր ճահիճների վրա նալթ լցնել տվեց:

«Ափսոս, ենքան նոթը ջուրն անեց դուր տեղը», —
ասացին գյուղացիք: Նորից ծայր տվին խոսակցու-
թյունները:

— Ասում են Բագվի նոթը, են վոր տրուբեքով
տանում են Բաթում, բերելու յեն, վոր ճկուտը նոթի
ամբար շինեն, բալքի մլակը վերջանա:

— Տենաս են սարի ծերին վոր ճկուտ չկա, բա
ենտեղի մլակը վորդիան ա: Թե՛ են մլակը կծում չի:

— Կծում ա, համա... հրեն, բժիշկն ասում ա, թե
են մլակը թունավոր չի, նրա կծածից մարդ չի հիվան-
դանում:

— Հալբաթ դրանց մեջն ալ ցեղեր կան, ելի, վոնց
վոր հրես մեք գեղումը Չոփուռանց ցեղը մուռտառ ցեղ
ա, Բոսականց ցեղը — գող, Պառավանց ցեղը — մարդա-
սպան...

— Ո՞վ կիմանա հողի ու ջրի բանը... դրեց ա,
ելի...

— Զրիցը - զրից ա, համա հրեն հսոր չորս հոգի
թաղեցինք; մի եղբան ել եզուց, ելոր... սրա վերջը...

— Ծնվողը — կմեռնի յեւ, ով վոր ես աշխարհն
ուտի ու մինչեւ դատաստանի որն ապրի, թող նա պար-
ծենա:

— Ախրը մեռնես, մեռնելու պէս, թե՛ անտեղի
շանսատակ ըլես:

— Շանսատակ չե՛, մլակասատակ ասա:

— Հա, հենց մլակասատակ ասեմ. եդ մարդիկը
հալբաթ մի բան գիտեն, վոր եղբան պնդում են, թե
չե... եդ վնց ա ուրիշ բաներում խելոք են, հենց ես
մի բանումը շահ-անշ...

— Գնա, գնա, գնա հրեն յաչեյկի տղեքը կողեկ-
տիր են դառնում, վոր ճկուտը ցամաքացնեն, նրանք
եւ են քեզ նման խոսում, գնա, բալքի դու յեւ նրանց
հետ միատեղ բաթմիշ ըլեք ճկուտի միջին, ձեզանից
աղատվենք:

— Ճկուտը կցամաքացնեն, բան... բա ել ի՞նչ
բանի կենան. ցամաքացնեն, վոր ամառվա հուր-ալավին
թե շոգած գոմեշը մեջն եր մտնում ջանը հովացնում,
եդ ել կտրի:

— Մլակը կտտորելու տեղ գոմեշ են կտտորելու:

— Բա իմ գոմեշը խուրճը կընու վախտը, վոր
շոգիցը թխված լեզուն հանի ու հեա, յես վնց ես
նրան հովություն տալու, բա ճկուտը վոր ցամաքա-
ցնեն, գոմեշս վճռաեղ պաի լող տալ... թե՛ սելի տա-
կին սիրտը ձաքի, տունս քանդվի...

— Հրեն գետը...

— Դրանք գետն ել կցամաքացնեն, գետը...

— Ձե, չե, ասում ա, արագ ջրելիս հենց արա:
վոր մի պուտ ջուր ել ա գնա վոչ դբա ճկուտը:

— Դե գնա ջրի բերանին սանձ դի, թոկով կապի,
վոր ճկուտը չթափվի:

— Ձե, գնա բժշկին կանչի, վոր գա մի դասախոս
եւ ջրի գլխին կարգա ու հասկացնի, վոր մլակին ջուր
չտա:

— Հրետ, հրետ, մի քեզ ել մտիկ, չանեդ կարում
չես թե կառավարես, դողը ջանդ ա մտել ատամնիդ
չխչխկացնում ես թե եզուց վտանքդ մեկնես, գոմշի
դարդն ես քաշում...

— Հալբաթ վոր գոմշիս դարդը... Յես վոր մեռ-
նեմ, յես կմեռնեմ մենակ, համա գոմեշս վոր սատկի,
սաղ տունս կքանդվի...

Խոսակցությունը սրվում եւ ճկուտը թողած բըռ-
նում են կոմբլիջի ոձիքը, քաշում - քաշքշում, ամեն
բան խառնում իրար, իսկ ամենից շատ հայոցում են
կոլլեկտիվը, վորի ինչ լինելը չգիտեն, բայց քանի վոր
նախաձեռնողը կոմբլիջն ե, վորոշել են, վոր վատ բան
ե լինելու:

Սա — իհարկե գյուղի մի կողմն ե, մի մասը, և
այն ել զգալի, մեծ մասը, վորովհետեւ գյուղն ունենո-
ր ե: Ինչքան գետնի յերեսին ե յերևում, մի տասն այն-
քան գետնի տակ ե թաղված:

Լսել են, թե կոլլեկտիվ մտնողն ամեն բան մեջ
տեղ ե գնելու, վախենում են պահածները յերևան
դան: Ամեն մեկն իր տան մյուս անդամներից ծածուկ
բան ե պահել, նրանցից գողացել, վախենում են հոգա-
բան ե պահել, հանեն: Ավելի լավ ե հոգին հանեն: Ճկուտը
պահուստը հանեն: Ավելի լավ ե հոգին հանեն: Ճկուտը
մահանա յե: Ճկուտն իրենց ներսն ե: Յեվ այդ ճըլ-
կուտի ցամաքելուց են վախենում:

«Արջն իրեն ահեց կգոռա», — ասում է ժողովը՝ դական առածը: Յեւ գոռում են ձայնը գլուխը գցած, դեռ կողեկտիվ չտեսած, չիմացած...

Կողեկտիվը նոր է կազմվել:

15 անգամ ունի կողեկտիվը, ութը կոմբիլի շահում են, մնացածը — չքավոր և բատրակ: Առաջժամ վաղահորն է միատեղ. այգիները ցրված են, միացնելը հնարավոր չէ. անասունների թիվը քիչ է, բայց և այնպես կաթնարտել են կազմել: Դյուղացիք խեթում են, ծաղրում: Կոմբիլիաները դեռ տատանվում են. կապված են իրենց հոր տնտեսությանը, բաժանվել չեն կարող: Ագիտացիան սղոցել է միջակների միտքը՝ նրանք դեռ ևս դիտողի գերումն են, թեև վոչ անտարբեր: Առաջին տարին է, առաջին քայլը: Մի կողմից վոգդորություն է, մյուս կողմից պրովոկացիա:

Ճիկուտը ցամաքեցնելու հարցն է դրված:

Կառավարությունը վորոշ նպատակ ու յերկարատե վարկ է բաց թողել կողեկտիվին, կոր ճիկուտը ցամաքեցնի, տեղը բանջարանոց գցի:

Համայնքի ընդհանուր ժողովն է: Ձայնագուրկներին չեն թողնում մասնակցեն, գիտեն, վոր թարս են խոսելու: Կողեկտիվի նախագահը հայտնում է պետության աշակցության մասին, խնդրում է, վոր գյուղացիք միացյալ ուշիբերով մասնակցեն աշխատանքին, ճիկուտը ցամաքեցնելուն: Տղամարդիկ դեմ են, բայց չեն կարողանում պատճառաբանեն, թե ինչու. միակ առարկությունն այն է, թե իրենք չեն ուզում աշխատեն, ցամաքեցնեն ճիկուտը, իսկ տեղը մնա կողեկտիվին:

Կանայք ընդհակառակը. թեև նոր բացված լեղվով, անկապ խոսքերով, բայց սրտի բուռն կսկիծով են խոսում. կողմնակից են, և վոչ միայն կողմնակից, այլ պատրաստ են իսկույն գործի դիմելու: Իմացել են, վոր ճիկուտի ցամաքեցնելուց է կախված յերեխաների առողջությունն ու կյանքը:

— Տղամարդն ի՞նչ գիտե, թե կնիկն ինչ ցավով ա յերեխա բերում, ի՞նչ տանջանքով ա պահում, մեծացնում, — խոսում է կինկաղմակերաչուհին, — մեզ ծացնում, — խոսում է կինկաղմակերաչուհին, — մեզ հարցրեք: Հերը վոր կա, վորդու համար յագ (ոտար) ա, համա յերեխեն մեր մեջքիցն ա պոկվում. թող մեր ա, համա յերեխեն մեր մեջքիցն ա պոկվում. մենք, ա՛յ, ես գեներեխեքն աղատվեն կոտորվելուց, մենք, ա՛յ, ես գեղումն ինչքան կնիկարմատ կա, մենք կցամաքացնենք ճիկուտը... Ո՛վ վոր ել հակառակ ա, նրա տունն ու տեղն ել կցամաքացնենք...

— Տարին մի յերեխա յեմ բերում, աչքիս լիսի պես պահում, մեծացնում, ու հիմի մենակ հինգ սև հողածերի տեր եմ, թե ճիկուտն ա անում, գնում եմ ես ձեռներովս քանդեմ, — արցունքն աչքերին խոսում է մեկ ուրիշը:

Յեւ այսպես անվերջ: Ժողովը դարձել է կանանց ժողով: Մեկը-մյուսից թե առած, իր ցաղն է պատում: Ամուսինները վոչինչ ասել չեն կարողանում: Ել առաջվա ժամանակը չե, վոր սաստեն, տուն գցեն դուռն երեքսի վրակեն, կամ ջարդուվիչուր անեն, վոսկորն ու միսը մեկ անեն:

— Հիմի համոզված եք, ելի, վոր ես գեղի տունը քանդողն եղ ճիկուտն ա... — Ծոր է տալիս դալաք Պետին, վորը և՛ սափրիչ է և՛ հեքիմ, արյուն կտրող:

Համոզվածն էր, քիչ կան, բայց ուզում են եղել փորձեն:

— Հա... աշխարհիս ամեն բան փորձի վրա յա, Լողամանն ինչ Լողաման եր, նա յեւ եր հազար անգամ փորձում, մի ցավին հազար հանգի դեղ տալի, փորձեցեք, մի բան վոր գեղը ծախ չի անում,— կրկին խոսում ե դալլաք Պետին ու չի բուխի արծաթապատ գլուխը պողոտեցում պինդ հուպ տված, մեխով քշփորում միջի կիսայրված թամբաքուն ու բռնում թափ տալով դուրս գնում:

— Եղ յաչեյկեն հենց ա անելու, վոր մարդ ու կնիկ իրարից բաժանվեն. կնանոնցը գրավել ա, խելքից հանել,— մրթմրթում են զրաղ քաշված մի քանի հոգի:

— Ով վոր ճկուտի ցամաքացնելուն մասնակցի, ցանած բանջարեղենից բաժին կառնի հավասար,— հայտարարում ե նախագահը:

— Մեզ վոչ մի բան ել պետք չի, մենակ թե հիվանդութիւնը վերանա,— խոսում ե մի կին, վորին ձայնակցում են և մյուսները:

— Ա՛յ խալիս,— գոռում ե արաղ քաշող Հաբեթը,— ես գեղի տունը քանդողը ճկուտը չի. մեր երեխեքը կոտորվում են, վորովհետեւ աղբրի ջուր չունենք. գետի ու առվի պղտոր ջուրն ա հիվանդացնում. մեծերն արաղ խմելով խեղդում են ցավին, համա երեխանց համա դժար ա, նրանք արաղ չեն խմում, յեկեք ետ ինչ վոր փող ա տալի կառավարութիւնը, ել փողով աղբյուր անց կացնենք սարիցը. ճկուտի հետ ի՞նչ դալի ունեք...

Աղբյուր բերելու հարցը հին ե. շատ վաղուց քանի՛ք բանի անգամ ծեծվել ե այդ Հաբաբաստիկ հարցը:

Փող են հավաքել, կապե խողովակներ պատվիրել. բայց... աղբյուրի փողը ջուր ե դառել սրա-նրա կոկորդով հոսել. այլևս վոչ վոր չի հավատում, թե բան դուրս կգա. գյուղացիք կասկածում են: Սովորաբար փողը հավաքում, պահ եյին տալիս ամենից հարուստին, վոր չկորչի. նա յեւ ուտում եր, իսկ գյուղացիք չեյին կարողանում բողոքեն նրա դեմ, վորովհետեւ դիվանն ու գառաստանը նրա կողմն եր, ույժը նրա ձեռին եր:

Արաղ քաշողի հայտարարութիւնը հուզեց ամեն-քին: Գոռում-գոչումն ընկալի:

— Աղբյուր բերեք, աղբյուր...

Ճկուտն ու աղբյուրը խառնվեցին իրար: Նոր հարցն այնպիսի վարպետութեամբ եր դրված, այնպես արամբանորեն եր պատճառաբանված, վոր ժողովա-կանները սառը ջրով տարված՝ ճկուտն ել մոռացան, մալարեան ել: Համարյա գլուխ յեկած գործը, նորից մալարեան ել: Համարյա ջուր մաղվեց: Դե, յեկ ու խանգարվեց, գլխին սառը ջուր ստեղծիր, թեկուզ կանանց նորից տրամադրութիւն ստեղծիր, թեկուզ անջ, վոր ճկուտը ցամաքեցնելու աշխատանքներին մասնակցեն:

Սառն աղբրի ջուրն ունենալն ե լա՛վ, թե ճկուտի բանջարանոցը: Իհարկե սառը ջուրը: Գյուղը բանջարեղենի կարիք չունի:

— Ճկուտն ել ցամաքացնենք, աղբյուրն ել բերենք,— հայտարարում ե նախագահը:

— Ուժներս չի պատիլ:

— Ծանր բեռ ա:

— Կոյեկտիրը թե դո՛նաղ ա, թող անի:

— Կոյեկտիրը թե դո՛նաղ ա, միջակ կա կոլիկ-

— Յեկեք ինչ-վոր չքավոր ու միջակ կա կոլիկ-տիվ մտեք, ուժ տվեք ես գործին, միասին անենք:

— Չէ... դուք հալա մի ոգուտափոր բան արեք
գեղի համար, վոր տենանք լավ ա, մենք էլ կզանք,
մենք հո լավ բանից փախչողը չենք...

— Դե, գնանք, գնանք, եսա լիսանում ա, հազար
ու մի ցավ ունենք...

— Հն, հն, լավ ես ասում շատ խոսալուց գլխներս
ուռալի, ճիկուտն էլ ջնանդամի ծոցը, աղբյուրն էլ...

Թոնթորալով ցրվեցին:

Ժողովատեղում քու-փոշման մնացել են կուլեկ-
տիվի անդամները և մի քանի համակերող:

— Բա հիմի ասում եք կուլակներին սրտովն ըլենք,
ելի, — վշտացած ձայնով ասում է նախագահը:

— Բա վոնց անենք, — տարակուսում են մյուսները:

— Այ թե վոնց անենք, — գրի, ինչ վոր կա-
սեմ, — կարգադրում է նախագահը:

Քարտուղարը թուղթն ուղղում է, գրիչը թաթա-
խում թանաքի մեջ: Լենինի նկարը պատից կախ ժող-
տում է:

— Լսեցի՞նք-ի բաժնում գրի. — Ուրեմը՝ կոմբլիշի,
կոմսոմոլի բլիշի և միաժամանակ կուլեկտիվի անդամ-
ների խառը ժողովը լսեց գեկուցում ճիկուտը ցամաքա-
ցնելու մասին: — Պրծամբ... Ըտենց: Վերջակետը դի:
Հիմի վորո՞ւնեցինք-ի բաժնում գրի. — Կառավարության
հատկացրած փողը հատկացնել աղբյուր բերելու գոր-
ծին, իսկ ճիկուտը ցամաքացնելու համար եզուց առա-
վոտ բոլորս միասին բահ ու թի վեր կալած գնանք ու
ճիկուտի գյուղը պատռենք, արխեր անցկացնենք, վոր
ջուրը քաշվի, ցամաքացնենք: Յեվըս, հետևենք, վոր բա-
ղերի ու արտերի արխիցը ջուրը չթափվի ճիկուտի մեջ:
Յեվըս հետևենք, վոր բաղերի արանքներում նոր ճըլ-

կուտ չգոյանա, յեղած մանր մուներն էլ ցամաքացնենք,
բալքի գեղն ազատվի հիվանդությունից: Յեվըս, վո-
րջումը միաձայն ա, ով հակառակ ա, թող կուլեկտի-
վիցն էլ հեռանա, բլիշիցն էլ: — Գրեցի՞ր, ըտենց, վեր-
ջակետը դի: Իմացած. դե հիմի գնացեք քնեցեք, վոր
առավոտը վաղ գործի կենանք, հերիք եր ինչքան գիլի
առավոտը վաղ գործի կարդացնեք... Արա Մուխի, դու
գլխին ավետարան կարդացնեք... Արա Մուխի, դու
պահապան կըլես, քու ոռճիկի հարցը հետո կընենք,
իսկ ով վոր ջուրը կթողնի վոր ճիկուտը դառնա, կամ
ով վոր նոր ճիկուտի պատճառ կդառնա, ցուցակ կա-
նես, կներկայացնես գյուղխորհուրդ, վոր տուգանք առ-
նենք ու գցենք աղբրի փողի վրա: Թող հենց եդ կու-
լակ շները բլբղան ու խանգարեն, տենանք ում մերը
տղա կբերի...

Ծանր մուրճի հարվածների նման իջնող նախա-
գահի խոսքերի դեմ ով կարող եր առարկի: Կուսակ-
ցական դիսցիպլինա յե, հանաք չե:

Աքլորականչ է:

Ճիկուտը մտքումը փորելով՝ գյուղի խավար բա-
վիղներով կես քուն կես արթուն շպապում են իրենց
տները, կուլեկտիվի անդամները:

— Աղջի Մազթաղ, հենց արա եզուց կինքաժինն
եւ մեղ միանա, կնանիք շատ հավաքեցեք, — ասում է
նախագահը, բայց փոխանակ դեպի իր տունը ծռվելու,
ճամփին շարունակում է:

— Ետ ուր, — հարցնում է Մազթաղը, կինկաղ-

մակերպուհին:

— Գնամ գուռնաչի թխանին իմաց անեմ, վոր
լիսածեգին գա. ես բանն առանց գուռնա դհովի գուռն
չի գալ, լաղաթ չի ունենալ...

շողերը լիզում են պարվորների գլուխը: Տղերքը տա-
քացել են: Պար բաշին նշան է տալիս. սկսվում է «չամ-
բար-չամբարի»-ն: Յերկու հոգի մտան շրջանի միջի բաց
հրապարակը: Պար-բաշու ձեռին մի ճիպոտ կա: Իսկա-
կան թամաշան նոր է սկսվում: Պարողներին մեկն ինչ
վոր անի, մյուսն ատանց ուշանալու պեսը է կրկնի
նույնը, ուշանալու դեպքում, ճիպոտի հարվածն իջնե-
լու յե թիկունքին: Փափախներն ընկան, գոտիներն են
արձակում, միմիանց խաբում են, մեկը ձեռք է տա-
լիս արխալուխին կամ տրեխին. գիմացինը հենց գիտե-
թե հանում է, սկսում է արձակել, բայց ճիպոտը հար-
վածում է: Զգո՛ւյ՜...

Քափ-քրտինքի մեջ մտած՝ պատվում են ջահելները
բոլորովին մերկ, միմիան շալվարով. սարում վոր լի-
նեն, են ել են հանելու, բայց եստեղ գեղամեջ է կնիկ-
արմատ կա: Զուռնան կոխի յեղանակ է փչում: Իրար
հասան, բռնեցին, միանները պրկվել են. հոռ-հոռ են
անում իրար: Ո՞վ կհաղթի...

Գյուղխորհրդի նախագահը մեջ ընկավ, բաժանեց:

— Դե, հիմի ով դոչաղ ա, թող կոխը շարունակի
ճկուտի միջին, ա՛յ, տղա. կասեմ, թե չխրվեք, — ասաց
նա ու աչքով արավ, վոր զուռնան ճանապարհվի:

Յերթի, կամ ինչպես ասում են, «ձիավորի» յե-
ղանակը հնչեց, հետն ել մի բարձրաձայն, միահամուռ
ուռն... Արևի տակ փայլում են բահերը, թիերը, դա-
նադան գործիքներ:

— Ով վոր նամուսը ծախել ա, դե թող տանը
մնա, հավերին կուտ տա, — բարձր գոչում է կոլլեկտիվի
նախագահը:

— Ե՛ս ել մի նամուս չի, արի գնանք, — ասում
է ճկուտը ցամաքեցնելուն դեմ խոսողներից մեկը և
միանում շքերթին:

Մի քանի հոգի գլուխներն ուրորում են, բայց քիչ
անց նրանք ել են ճանապարհվում:

Կանայք տուն ու տեղ շտապ հավաքեցին, հաց և
ուտելիքն վերցրին, վազում են իրար ուսի տալով և
սրան-նրան կանչելով:

Գյուղում մարդ չի մնացել համարյա:

Յեկեղեցու դռան մոտ, քարի վրա նստած, թևերը
կոտրած ագռավի նման մի սև բիծ կա: Շարժվեց:
Բռնոթի յե քաշում:

«Ել վոչ ժամ մնաց, վոչ պատարագ. պսակից ու
կնունքից ձեռ ա քաշել խալիս, մեռել թաղելն ել վոր
չըլի... Ե՛հ աշխարհ, աշխարհ... Ել վոչ կերակրի կա, վոչ
պաս, վոչ մատաղ... հառաչանքով մտաբերում է ան-
ցած որերը, բայց ուշի պես կոկոռում:

— Հեռվից քանդեցեք, դեսիցը, չորս տեղից արխը
հանեցեք, վոր գյուլին հասնենք թե չե, փորը պատռենք,
ջուրը դեպի գետը գնա, — կարգադրում է նախագահը:

— Դենը կաց կխրվես, ճկուտը գերեզման կդառնա
քեզ համար...

— Գորտերը բողոք են տալու, վոր իրանց բաղ-
նիսը քանդում ենք:

— Դե, ձեզ տեսնեմ, տղերք ջան, արխը լեն ու
խորը քանդեցեք:

— Թե՛ան, դուռնեղ պի՛նդ փչի: Յեկեք մարդ դար-
կենք տեր Սնկչտումի: յետեից, թող զա մլակներին
պսակի:

— Հն, հն, լավ ա ասում, ես գորտերն ել տի-
րացուցի՛ն կանեն:

— Մեսրոպ, մի՛ աչք ածա, տես ով չի յեկել, միտդ
պահի, վոր ցուցակ անենք, պետք կա:

— Դե, հա, դե, տղամարդիկը թող քանդեն, կնա-
նիքը հողը դուս տան:

— Հենց արեք, ապրեք, արևը կես որին վոր զա
թե ջուր խմի ճլկուտի գյուղում, մենակ ցեխ ու տիլ
գտնի:

— Թող գնա ծովիցն ու գետիցը ջուր խմի:

— Դադմես վորտեղին տալիս եմ, ջուր ա դուս
դցում:

— Տրեխներդ հանեցեք, շալվարի փոխկերը յետ
ծալ տվեք:

— Դամշկուտում ոճ կըլի, երեսանցը հեռու պա-
հեցեք:

— Բա հենց ասում եք — կուլակ եմ, յես ել ձեզ
նման հրես ես ցեխումը տըրտում եմ, թե չե...

— Դու կուլակ չես, խեղճ ու միտդ ա կուլակ:

— Մլակի ձենը գեղիցը կտրվի թե չե, քեզ ձայն
ենք տալու, քլունգդ պի՛նդ վրա բեր:

— Յանի մի ասեք, տենամ, թե իմ ձենը խի՞ յեք
կտրել ե, յես ել ձեզ նման ուսաթ եմ, թե չե...

— Թարս զրից ես անում նրա համար, դուդ խոսա,
ձենդ քեզ տանք:

— Ձենդ հրես բռումս պի՛նդ հուպ տված, վոնց
վոր դու եյիր ինձ քու բռումը պի՛նդ հուպ տվել նո-
քյար վախտս:

— Արա, խի՞ չես բռուդ բաց անում, եդ մարդու
ձենը իրա տեղը գնա, հիմի յել հո դրա բատրակը չես:

— Ժամանակը թամամ չի. ձենն իրան տամ թե
չե՛ կարգին բանի պետք չի ածել վրես կըղավի... հիմի
յե՛կ բղավի...

— Են վո՛նց ա ասել... հն. —

«Հիմի ե՛կ լոենք, յեղբայրք, հիմի յե՛կ»...

— Ե՛տ վորդիան հանեցիր, ետ մաշած յերգը:

— Թաղա յերգի միջին նիվթ չկա:

— Համ... արա կոմսոմոլ մի ասա, թե են վոնց
ա ասում...

«Այս հին նկուսը կփոխենք մե՛նք,

մի՛նչեմ հիմքեր — յե՛կ հետ,

մե՛ր նոր բոսանք կփոխենք մե՛նք,

ուր վո՛չ մլակ կա, վո՛չ ել գորս»...

Ամենքը ծիծաղում են այս նոր տեսակի «խտեր-
նացիոնալի» վրա: Մի քանիսը յերգը շարունակում են
խակական բառերով: Աշխատանքը յետում ե:

— Թե՛ան, դուռնիդ ձենը կտրի, յետ դառեք հաց
կերեք, առավոտահացի վախտն անց ա կենում:

— Ձե, չե, հազիր տաքացել ենք, եսս կհասնենք
գյուղին, նոր յետ կդառնանք:

— Տղերք ջան, հը՛ արեք պրծնենք, վոր ձաշից
հետո յել անելու բան չունենանք, ջուրն արխերով
անենք ու թամաշա անենք:

— Դե, ձեզ տեսնեմ. «հուպ տու, պռավի տղա»...

Վո՛չ վոր յետ չի ուղում դառնալ աշխատանքից.
տաքացել են: Ամեն մի խումբ աչքի տակով ստուգում
ե մյուսին, վոր ինքը յետ չիմա. մրցակցությունը հա-
սել ե իր գագաթնակետին:

— Ստո՛...ո՛...ո՛ալ, — բացականչեց Հորբորդ խմբի գլխավորը:

— Ի՞նչ ա պատահել:

— Զուրը վարարեց, ել առաջ գնալ չի կարելի:

— Յեկեք ես մեկեկներին մեջք տվեք:

— Յետ դռնեք, գնացեք հացի թաղարիք տեսեք, եսա մենք ել ենք տեղ հասել, մեզ պետք չեք:

— Լավ են ասում. արա Վասիլ, վաղ տու գնա, կողեկտիվի հաշվին երկու վոչխար մի յերինջ բեր մորթի, ես խալիսը սոված հո չի կենալու. մի գեղ խալիս ա, սրանց բերնին բան չի դիմանալ:

Վասիլը վազում ե:

— Արա, ե՛յ, հենցը բեր, վոր բանի նման ըլի լղար ապրանք կբերես, կմորթեմ քեզ:

— Վասիլը գիդա իր բանը:

— Կնանուհեց մի մասը թող յետ դռնա ծառի տակին սուփրա բաց անի, մի քանիսն ել թող շուր բերեն, եսա պրծնում ենք:

— Վարթուշ ջան, մի քանի վոտից թեթև աղջիկ վեր կալ, վաղ տվեք մի քանի կուժ շուր բերեք են վերի աղբրիցը:

Աղջկերքը վազում են, թիթեռի պես յերկարա - փեշ լինինները փոփոացնելով: Մի քանի ջահել աչքի տակով նայում են նրանց յետևից:

— Բանիդ կաց, խելքդ ջրի գնաց...

— Ես ձմեռ վոչ մի աղա իրավունք չունի Զագս գնալու, վոր պսակվի, մինչև ամառվա հունձ ու խոտը հալա չսկսված վախտը, են բանի բոշ ժամանակը, չմասնակցի վերի սառն աղբյուրը գեղամեջ բերելուն:

— Իմացար, քարը վորդի գցեց...

— Բա չիմացա. մի որ ել վոր հավաքվեցը եսորվա պես, են աղբրի շուրն ել կբերենք:

— Աղբյուրը գեղին, ես ասենք լավ, ամենքի հա - մար, բա ճկուտի հողը՝

— Ճկուտի հողն ել...

— Յավա՛...ա՛...ա՛...ա՛շ, շուրը վարարեց...

— Կանդ առեք, տեղ ենք հասել:

— Յեկեք ճկուտի փորը պատռենք:

— Ձե, թողեք ճաշից հետո:

— Տո, թո՛ղ մի բիզ տամ ես անտերի փորին ե, հենց ա միկիտան Շամիրի ուռած փորն ըլի լկկալիս...

— Յետ դռնեք կրակ արեք, պղինձը վրեն դրեք, հրեն Վասիլը վոչխարը մաշկում ա:

— Աղալո՛, վաղ տու քոմագ արա, յերինջը մա - տաղ արա ճկուտին:

— Վասիլ, ջիգարը գցի կրակը «քյուլլամա արա», բեր նախագահին:

Արևը զենիթում կանգնած ժպտում ե: Կանայք բաց են արել սուփրան յերկար ու մեկ. ով ինչ բերել ե իր տանից, մեջ տեղ ե դրել:

— Տղերք, — առաջարկում ե մեկը, — ասում եմ վաղ տալով գնանք գետը դառնանք մի լավ լողանանք, քրտինքներս մաքրվի ու յետ գանք հալալ հաց նըս - տենք:

— Լավ ա ասում, — ձայնում են այս ու այն կողմից:

— Չմրսենք:

— Ձենք մրսի, որը տաք ա:

Վազում են:

Բաղերի յերամի պես թափվեցին գետը: Ճի՛շ, աղ - մուկ, աղաղակ...

Բոլոր հարսանիքների կերակուր յեփող հայտնի «սուդյա Կարապետը», վորը Նիկողայի ժամանակ մի քանի տարի թյուրիմացաբար գյուղական դատավոր և յեղեղ և վորին դուրս են արել անպատիվ կերպով, վորովհետև կաշառք ուտելիս և ապրիլին դատ կատարելիս չի յեղեղ շերիփը ձեռին խառնում և մեծ պղնձի մեջ քլթքլթացող «չորան բողարթման» ու կերակրի համը տեսնելով դնդնացնում և հայտնի բայթին, վոր ամեն անգամ ծանր ու բարակ յերգում և կլկացնելով և վորի իմաստը մոտավորապես այն է, թե՝ «ավելի լավ և մարդ անալի կերակուր ուտի, քան անալի ընկերի հետ յերկար ճամփա գնա»:

Ծալապատիկ նստոտել են իրար դիմաց, տղամարդիկ առանձին, կանայք առանձին: Հին աղաթը դեռ չի վերացել գյուղում: Տղամարդկանց հետ միասին սեղան նստելը դեռ ևս ամոթ և համարվում:

Գինի, ողի չկա, բայց ամենքի տրամադրությունն էլ բարձր է, կատակներ են անում:

— Ընկերներ, — խոսում է գյուղխորհրդի նախագահը, — ճիկուտի հարցը որակարգից դուրս եկավ. հսոր մենք ահագին գործ կատարեցինք: Ես և մեր ամբողջ գյուղի հասարակութունը մերով-մանուկով եստեղ ա. ասում եմ մի վորոշում կայացնենք...

— Խեղ ըլի, ասա:

— Ասում եմ ես ճիկուտի տեղը հատկացնենք մեր դպրոցին, վորը շատ կարիքներ ունի, նոր բացված դպրոց ա, մեր երեխանց միտքը լուսավորող, թող տարեկան ինչքան յեկամուտ վոր ստացվի ես հողիցը, գնա մեր ուսումնարանին: Հեռո՛...

— Կեցցե՛:

— Բռնվո, Բռնվո...

— Ուռն...

— Տո՛ւշ, տո՛ւշ:

Ծափերվ տաբափ, գովասանական բացականչություններ:

«Ծ-շ-շ... խըլ-խըլ-խըլ-խըլ»...

Թվաց թե վաբարած դեռ և գալիս:

Ճիկուտին դեմ ընկած միջին արխերից մեկի բերանի հողե պատենշը չդիմանալով փչել էր ու ջուրն աղմուկով հոսում էր:

Վեր թռան տեղերից:

— Թեան գուռնեք ձիավորի փչի, ջուրը լահու տվեց:

— Արա վաղ տվեք են մեկեկները բերանի հողն էլ յետ տվեք, թե չե ես մի արխի դրադներովը կընկնի ջուրը, ամագներս կկորչի:

Մի քանի հողի թիերը ձեռին վազեցին:

— Արա բիդ տու, բիդ տու ու հեռու կաց:

— Փախի, փախի տակով չանի...

Հացն էլ մոռացվեց, ճառն էլ:

Ջուրը հորդեց. սկզբում պարզ, ապա հետզհետե պղտոր, լիախառը: Արտասովոր տեսարանը մի ակնթիվ թարթ շմեցրեց բոլորին, լսվում էր միմիայն վշվշա-ցող ջրի ձայնը, ապա միահամուռ աղաղակը միախառ-նվեց ջրի վշտցին և մի խելագար ցատկառում ու պար սկսվեց ճիկուտի շուրջը: Յեղեգներն սկսեցին որորել իրենց չոր գլուխները, գորտերը թռչկոտացին: Հետըզ-հետե բացվում է ճիկուտի տակը. տիղմ, վոսկորներ, հետե բացվում է ճիկուտի տակը. տիղմ, վոսկորներ, թռչունների կմախքներ, նեխված գորտերի լեշեր, ժան-

գոտած դանակ, հվ գիտի, վոր տավարածն և կորցրել, հուրունքներ, կորիզներ, վեգեր, լուցկու դատարի տուփ, կրյայի պատյաններ...

Ի՞նչ ասես չկա...

Ձրի հոսանքը բարակեց, մի քանի հոգի ավելի լայն են բաց անում առունների բերանը, վոր ճկուտում ալլա մի կաթիլ անգամ ջուր չմնա: Յերերկա- ները համարձակություն ձեռք բերած մտնում են ճըլ- կուտը փայլուն քարեր և դանազան իրեր հավաքում, քարերով խփում, հալածում են գորտերին ու ճահճա- յին մոկերներին:

Ճկուտի շուրջը կատարյալ տոնակատարություն է:

Իրիկնադեմ է: Վողջ գյուղը մեծ շուքով ու հան- դիսավորությամբ վերադառնում է գյուղ: Ամեն մեկը շտապում է տուն, խնամելու իր անասունին և հանգըս- տանալու: Միայն կոլլեկտիվի անդամները, նախագահի կարգադրությամբ, հավաքվել են ժողովի:

Դիշեր և. գարնանամուտի անասող գիշեր. լու- սինն հվ գիտի վորտեղ է մոլորվել, ճամփեն կորցրել, չի յերևում: Ճրագները հանգան սովորականից վաղ:

— Կա-ա, — հարցնում է կոլլեկտիվի նախագահը:

— Կա:

— Քանի փութ:

— Տաս-տասերկու:

— Դե, ընկերներ ջան, առեք ես փողը, տվեք իրան, թող նեղութին քաշի վեր կենա կոոպերատիվը բաց անի ու մի հինգ փութ մեզ տա. ասեք կոլլեկ- տիվն ա ուզում: Մարդդ մի փթանոց բետոն վեր կա- լեք, լցրեք ու բերեք հետներդ: Հա, չմոռանաք, մի պաչկա ել սպիչկա վեր կալեք: Դե, մնացածդ ել գնա-

ցեք ինչքան հին փալա-փուլուս գտներ տանը բերեք, ամեն մեկդ ել մի կոնատակ խոտ:

Յրվեցին:

Նախագահը ման-ման և անում սենյակում: Գլուխը քորեց: Յերգ և մուլտում. «Սմեղայ մի բոյ պայղում, զա վլաս սավեհա»... Աչքն ընկնում է դիմացի պատին. կենինը ժպտում է:

— Հը՛, ընկեր կենին, ծիծաղում եմ ոսերենիս վրա... ախ... ախ ինչի՛ շուտ մեռար ե՛ր, բա քեզ նման մարդը կմեռնի...

— Յեկանք: Ետ ո՞ւմ հետ ես գրից անում:

— Ընկեր կենինի. յես ոսերեն յերգ ասեցի մին ել տենամ վրես ծիծաղում ա, ասում եմ հիմի յե՛լ հա- յերեն յերգեմ, վոր վո՛չ հասկանա, վո՛չ ել թե ծիծաղի վրես:

— Բան ասեցիր դու ել. հենց գիդաս կենինը հայերեն չի գիշում... նա ամեն լիզու ել գիդա: Բա են ի՞նչ ա, հրեն հայերեն գիրքը, են կենինը չի գրել...

— Դե գնանք, գնանք գշերն անց ա կենում:

— Սովերները շարժվեցին դեպի ճկուտը: Հասան:

Սովերները շարժվեցին դեպի ճկուտը:

Յեղեգնուտը քամու հետ սվալում է:

— Խոտը տեղ-տեղ վեր ածեցեք ճկուտի դրա- ղովը մին, վրեն քիչ նավթ ածեցեք. ինչքան ել փա- լաս ունեք ձեռներիդ լավ նոթոտ արեք ու հաղիլ պա- հեցեք. տեղ-տեղ ել հենց նոթը վեր ածեցեք դամշկուտի դալին (խիտ) տեղը:

Շըջում են ճկուտի չորս բոլորը: Ամեն ինչ պատ- ռաստ է:

— Դե, հիմի խոտերը կրակեցեք, ետ փալաններն ել վառեցեք ու դեսից-դենից շարտեցեք դամշկուտի

մեջ, հրես հենց վառենք դամշկուտը, վոր տեղը սե մո-
խիր մնա մենակ, տենամ ել մլակը վորտեղ ա վեր գալի,
կամ վորտեղ ա ձու դնում:

Հրգեհ: Յեղեգնուտը ճարճատու՞մ ե. բոցը յեր-
կինք ե հասնում:
Գյուղը լուսավորվել ե: Շները վախից կաղկան-
ձում են:

Չայներ, ձայներ, ձայներ...

Գյուղը թառժաժ եղավ:

Ճիկուտն այրվում եր:

* *

Սմառ ե:

Հանդերը լկլկում են: Խոտը հնձել, դիզել են դաշ-
տում, վոր հետո տուն կրեն: Կոլլեկտիվի արտերը —
շարքացան արած, գլուխները սանրած՝ կանգնած են
մարդաբոյ, որորվում են թեթե քամուց. հասկերը
գրկախառնվում են միմիանց, պար բռնում, գլխով
անում անցվորականին, բարեւում ու ծալուում, ցույց
տալով իրենց գեղին ու կարմիր ատամները:

Մանգաղը — տեղ - տեղ արտն ե մտել. հաճելի
շրփոց ե լսվում, հետն ել միալար յերգի դնդնոց: Պայ-
ծառ ե հնձվորների դեմքը. գյուղում հիվանդների թիվը
շատ քիչ ե, մեռնող գրեթե չկա: Ճիկուտից հոսած հի-
վանդ ջուրը տարավ իր հետ մալարիայի թույնը, խառ-
նեց գետին, իսկ սա յեւ սկեց, կորցրեց:

Ճիկուտի տեղը — մի մոխրագույն տափարակ ե,
դոգավոր. տիղմը ճաքել-ճաքճքվել ե: Յերբինն պոչա -
վոր կրյաներ են գալիս այցելության, կանգ առնում
ապուշ կորած, չեն հասկանում, թե ինչու ցամաքել ե

ճիկուտը: Շոգ ե, կրյաները լող տալ են ուզում, վոր
հովացնեն այրվող մարմինը՝ պատյանի մեջ: Ագռավ-
ները — յերամ - յերամ արշավում են դեպի ճիկուտը,
պտույտներ գործում, անհուսալի կոկոսում, ապա կրկին
հեռանում: Գորտ չկա, ճիկուտ չկա, մոծակ ու մոծեղ
չկա...

Սարի ծայրից — արտերի, արոտների ու այգի-
ների պահապանի սրտոնս աչքը նկատեց ինչ-վոր մար-
դու, վորը, պարտիզում ջրում ե իր բանջարեղենը:
Չայն ե տալիս. —

— Եհեյ... ետ ով վոր ես, այ մարդ... մարդ ես,
թե երեխա, քեզ եմ ասում, ա Բալաբեգանց բաղի
ոքմի: հենց արա ջրիդ բերանը տանուլ չտաս, դեռ
ճիկուտը ջուր չգնա. ըշտրափ ա, հա, մեծ ըշտրափ...

Բալաբեգանք այն անկողնում կուլակներն են,
վորոնք վոչ մի կերպ չեն համոզվում, վոր ճիկուտն ե
յեղել մալարիայի բունը. նրանց վրա հսկողությունն
ավելի ուժեղ ե:

Բալաբեգանց այգում գտնվող մարդը փնթիփնթում
ե, թոնթորում, մըջյուն կծած արջի նման, բայց ան-
գոր ե, չի կարող պահպանի նկատողությանը պատաս-
խանի, առավել եւ չի համարձակվի ականջի յետևը
զցի նրա ազդարարությունը:

«Գյուղը հակառակվել ե մեզ, — ասում ե Բալա-
բեգանց ցեղի ավագը — Կարմրավիղ Արտեմը, — Բալա-
բեգանք ես գեղի աչքի փուշն են դառել»...

Գյուղի ծայրին, շեկ փլվածքի տակ, տախտակով
ծածկված մի յերկար չարդախ կա նոր շինած: Այդ
ծածկի տակ բրուտն ե նստած իր աշակերտներով: Շի-
կահողը ցեխ են անում աշակերտները, տրորում, ապա

ձեռքով կաղմում, ջրկում միջի քարերը, լավ հունցում, սրածայր փափախների նման ցեխագունդ շինում ու դնում վարպետի առաջ: Վարպետը — թեքերը յետ ծալած, մետակ շապկով, նստած և հորի մեջ. վոռով պտույտ և տալիս չարխը, ցեխագունդը դնում կլոր տախտակին, դանազան ձեքեր տալիս, ապա դուրս բերում խողովակ:

Ապագա աղբյուրի խողովակներն են շարված ծածկոցի տակ, արևում:

Չարդախի մոտ ծուխ ե բարձրանում: Հնոցն ե
անդադար վառվում: Վարպետին կարդադրված ե հար-
վածային կարգով մինչև կալերի վերջը պատրաստել,
դուրս բերել անհրաժեշտ քանակությամբ խողովակներ:

Աղբյուրը բերելու նախաձեռնությունն իր վրայ չէ վերցրել կոլխոզը, բայց մենակ չե, վողջ գյուղն եւ ա-
ջակցում: Զուրն ամենօրն եւ պետք: Զուրը — կուլակն
եւ ե խմում, բատրակն եւ, կոլխոզի անդամն եւ ե
խմում, մասնավորն եւ: Սակայն... Բալաբեգանք թարս-
վել են:

Հին պարտքի հաշիվը մեջ տեղ ե յեկել: Գյուղ-
խորհուրդը հատուկ վորոշում ե կայացրել, վոր վաղ
ժամանակ գյուղից հավաքած ու Կարմրավիղ Արտեմին
պահ տված աղբյուրի փողը վճարի: Կարմրավիղ Ար-
տեմը «բացատրում» ե, թե ինքն այդ փողը — ժամա-
նակին ծախսել ե գյուղի այլ կարիքների վրա: Ձեն
հավատում, լսել անգամ չեն ուզում: Բատրակներից
մեկը ծաղրով ասել ե ժողովում. «Արտեմի կարմիր վիղը
պետք ա կարմիր գյունդ (խոզովակ) շինենք ու միջովը
ջուր անցկացնենք, եդ վրի միջով շատ փողեր են հո-
սել» դա նրա փորը»...

Կարմրավիզ Արտեմը հին գեղ է, անստոամ գեղ.
նա շատ բան գիտե աշխարհի անց ու դարձից. լավ տ-
տեղյակ է բոլիեկներին զործներին, նրանց աշարքնե-
րին: Փորձ է անում բոլիեկյան դենքով կռվել գյուղ-
խորհրդի վորոշման դեմ: Խոսք է թոցրել բերանից իր
նամաների մոտ թե՛

«Բնութիկնիս հին պարտքերի դեմ են, իրանք
ինչո՞ւն չեն վճարում Նիկալայի պարտքը, վոր փրան-
ցուզն ու ինգլիզը հաշտվեն, մենք ել ես նեղ որերը
չքաշենք: Պարտքը տալը թե լավ ա, իրանք ինչո՞ւն չեն
տալի, սաղ յերկիրը դալթեն, նստել են»...

Ես խոսքը — քամին տեղ ե հասցրել: Դրանից հետո
փափսացել են իրար ահանջի, վրդովվել, հարցն ավելի
կտրուկ դրել համայնքի ժողովում: «Կարմրավիղ Ար-
տեմը կամ հինգ հարյուր մանեթը թող տան, կամ թող
քոչի, կորչի, գնա ինգիլիզի ու փրանցուղի յերկիրը»...
Քոչի, կորչի, գնա ինգիլիզի ու փրանցուղի յերկիրը... Զտան, ինչ անի...

Հինգ հարյուր մանկիթ տա... Մանկիթ
Ո՞ւր գնա... Գյուղից քոչիւ՝ Ես ասենք քոչեց. ո՞ւր
գնա... վո՞ր դյուղը կնդունի նրան... Ամեն տեղ ել
խորհրդային իշխանութիւնն է, ամեն տեղ ել գյուղ
խորհուրդ կա, կոմբէյն կա, բաւարակելո՞ւմ կա, չքավո-
րական խմբակ կա, կոմսոմոլ կա... Ասենք, ինքը քո-
չեց. Բաւաբեգանց սաղ ցեղն ել հո չի՞ կարող պոչից
կապած տանի... Հինգ հարյուր մանկիթը վոր տա, ինքն
եւ կդառնա մի աղքատ — տնանկի մեկը... Պարտքը —
թող Նիկալայի փողով ընդունեն, հրեն հարյուրանոց
կաթիկեֆը ծալած, իրաք վրա դարսած, ծալը - ծալին
կարում է, մի քանիսի ծայրից ել մուկը կոծել է, հին
մուրհակների հետ միասին...

Արտեմը — գլուխն ի՞նչ քարովը տա...

Կարմիր խողովակներն իրար վրա դասավորված պատ են կազմել, հարյուրավոր բերաններով պատ: Առավոտյան ու յերեկոյան քամին շոյում է նրանց: Պատը, յերգում է ինչ-վոր անորոշ մեղեդի, յերբեմն ել թվում է, թե խողովակները պարի յեղանակ են փչում:

Արտեմը լսում է հեռվից այդ յերգը, գլուխը հուսահատ որորում ու դառնագին անեծք մոմում: Թվում է, թե խողովակներն իրենց մշտաբաց բերանով շարունակ նույնն են կրկնում Արտեմի ականջին — «տո՛ւր... տո՛ւր»... Նրանք ել են պարտքն ուղղում: «Մի քար չչալըր-տեմ, ջարդեմ, ձենները կտրեն, — մտածում է Արտեմը, — բա վոր իմանան... մահս ե»...

— Եղբան փողը տալ չի լինի, — ասել է Արտեմը գյուղխորհրդի նախագահին յեկեք, խիղճ ունեցեք, մի քիչ պակսեցրեք... Ախր եղ վոր տամ, ել տակին բան չի մնալ, յես ել ձեզանից մինը կդառնամ, բա ես գեղում մի հարուստ ել է չպետք է լինի՞, վոր կարիք յեղած ժամանակ նրա դուռը գնանք:

— Մեզնից մեկը կդառնաս, ավելի լավ, — պատասխանել է նախագահը, — քեզ կընդունենք կոլեկտիվի մեջ, ձայնդ ու իրավունքներդ կվերականգնենք, կդառնաս իսկական խորհրդային քաղաքացի:

— Ի՞նչ կըլինի հիմի ընդունեք կոլխոզի մեջ...

— Կարողութունդ ամբողջ մեջ տեղ դիր, կեսն աղբյուրին հատկացնենք, կեսը — կոլխոզ մտցնենք:

— Ետ հո՞... Ելի մի հաշիվ ա դուրս գալի... — տարակուսել է Արտեմը:

— Հրաման քեզ, մի հաշիվ...

Կենտրոնից «Ջրանտես» ընկեր է յեկել:

Չափ ու ձև է անում ընկերը, վորոշում, թե ինչ տեղով է հոսելու ջուրը, ինչքան ծախս կնստի. քննում է խողովակները: «Ջրանտես» ընկերը տեղը գծեց, նշաններ արավ, նախահաշիվ կազմեց ու գնաց:

Սառն աղբյուրի ջուրը դեռ էս թղթի վրա յե «հոսում» գեպի գյուղամեջ, բայց նա, այդ տարիների յերազանքը, այդ սառն աղբյուրը, շուտով հոսելու յե իրապես:

Գյուղխորհուրդն ու կոլխոզը — անդամներին պարտադիր աշխատանքի յին լծել: Խորհրդայնացման առաջին տարիներին հաճախակի դործադրվող, իսկ այժմ կարծես թե մոռացված, շաբաթորյակը կրկին մեջ յեկավ, շաբաթորյակը — կիրականորյակ դառնալով:

Փորում են արխը:

Գյուղն այստեղ է. սարալանջին: Կարմրավիզ Արտեմը չկա. աշխատանքին չմասնակցելու խայտառակությունից ազատվելու համար, ինչ-վոր պատրվակով գնացել է հարևան գյուղը: Մատների վրա կարելի էր հաշիվ բացականքելին, վորոնք Բալաբեգանց ցեղից են. մի քանի տղամարդ. սակայն վնչ մի բացակա կին: Մինչև անգամ Բալաբեգանց բոլոր կանայք այստեղ են, ավելի յեռանդուն են կալել աշխատանքին:

Կատակներ, յերգեր, ծիծաղ...

— Խորը քանդի, «Ջրանտես» ընկերն ասաց

կանավը խորը փորեցեք, վոր ամառը ջուրը չտաքանա...

— Հա, լավ ա ասում, խորը քանդի, վոր Արտեմի վիզը խորը թաղենք, թե չէ գետնի յերեսը կընկնի, արեւը կըդադի, մեղք ա...

— Բալաբեգանց կնանոցն տանցեք, շուրջ վոր տանեն տուն, իրանց մարդկանցը շուրջ չտան...

— Ես ջրոյն եփած կերակուրից չտան...

— Թող գնան առվիցը խմեն:

— Ախճի, Վարդիթեր, ձեռք վոր սատանա ընկնի, թարգ կնալնես, եդ վիճաց ա չես կարում Արտեմին խելքի բերես...

— Մի անգամ ուրիշները թարս են նախել, չեմ կարում ել աջ նախել, — պատասխանում է Վարդիթերը, Արտեմի կինը:

Ծիծաղում են:

— Մեր մարդուցդ բաժանվի, կոլխոզ մտի, — կատակում է կենկազմակերպչուհին:

— Մագթադ ջան, վախում եմ ուրիշ մարդ չձարեմ: Համ ել... շատ եք դռն անում, քիչ ել խաթրով ժած եկեք, նա յեղ ձեզ նման մի մարդ ա...

— Աջ թեքում, ընկերներ, աջ թեքում... — վոզե-վորված բացականչում է, կատակում կոմսմոլ Արտոն:

— Աջ ու ձախ չեմ գիտալ, դուզ քաշի, գոռ...

Գյուղը վորոշել է կոպեկ չծախսի արելը փորելու համար, թեկուզ գործը քիչ ուշանա յեղ, ընկնի դար-նան դիմաց: Հավաքած գումարը — պետութայն հատկացրած գումարի հետ միասին — կծածկի մյուս ծախսերը: Քար ու կիր է հարկավոր, վոր ջրամբար պատեն: Ամեն կիրակի պարտադիր աշխատանք է հայտարարված մեծերի, խոկ պիտներ - կոլլեկտիվն իր ազատ ժամերին փորփրում է մատաղ ձեռներով, ինչքան կարողանում է: Մի տեսակ սոցմրցակցություն է ինքնաբերաբար: Այսպես կոչված խոտվածներն ել են հաշտվել, գյուղի ամոթն ու նախատինքը տանելը հեղա-

րան չե. մարդկային յերես է, ինչքան ել պինդ լինի դարձյալ ամաչում է, կարմրում, մանավանդ, վոր աղբյուրը բոլորի համար է, վոչ վոքից վոչ հող են ձեռում» վոչ ապրանք:

Գյուղամիջում ցեմենտից ավազան - ջրանավ են շինում անասուններին ջուր տալու համար, թող նրանք ել խմեն սառն աղբյուրի ջրիցը: Գործը յեռում է:

Ճիկուտի վրա մարգեր են յերևում. չորս բոլորը ցանկապատ է, վորի ներսից դալար շյուղեր կան տընկըված շարքով. բարդի է ուռի շյուղեր են: Մարգերի կողքերով ել կան շարված պողատու, աղնվացեղ ծառերի շյուղեր: Ապագա ծառուղին գծված է: Նոր, կանոնավոր ձևի այգի յե դառնալու հետապալում: Նոր բանջարանոց - պարտիզում նոր մարդիկ են աշխատում: Գարուցի մանուկներն են դրանք, վորոնք ուսուցչի գեկավարությամբ, իրենց փոքրիկ մատներով շինում են իրենց պարտեզը:

Գյուղացիների գույնը պարզել է, աշխուժացել են: Նոր յերդ են կապել կոլլեկտիվի վրա, յերդում են, գովում: Յերգի մեջ հիշվում է կարմրավիզ Արտեմը, նրա, նից գանձված հինգ հարյուր մանեթը, հիշված է նաև, թե ինչպես կոլլեկտիվը գյուղն աղատեց մալարիայից: Կոլլեկտիվ հեղինակությունը նվաճումներ է կատարում. այժմ շատերն են գիմում տվել կոլլեկտիվ մոտեկու համար:

Գյուղամիջում մի նոր պատ կա կամարածի, դուշ-նըզդույն քարերով պատած, ճակատին կարմրավուն լայն քարի վրա փորագրված է յերկաթագրերով — « ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ԱՂԲՅՈՒՐ, ԲԵՐԻՆՔ 1930 ԹՎԻՆ »: Արձանագրության տակ յերկու յերկաթե խողո-

վակից ծորում ե գուլալ ջուրը: Կամարի* մեջ տեղը՝ հնգաթե աստղն ե կարմիր ներկած, իսկ կողքերին — մուրճ ու մանգաղ ե ցորենի հասկերից կապած մի խուրճ:

Կոլլեկտիվը ծավալում ե իր աշխատանքները:

Ճլկումն ու աղբյուրը կենդանի ապացույցներ են, ագիտացիայի սուր զենքեր: Խոսում են տրակտորի մասին. առարկող չկա. ով կասկածամիտ բան ե ասում, աչքն են կոխում ճլկումն ու աղբյուրը:

— Համաձայն չեմ, մեզ հավան չեմ, ես գեղիցը քոչի, աչքներս նոր ա լին գալի...

— Ձե, բան չեմ ասում. լավ բանին հիմ հակառակ կըլի, մենակ ասում եմ ել ավելի լավ լինի...

— Ուզում ես ել լավ լինի, մտի կոլլեկտիվ, կարողութունդ մեջ տեղ դի...

— Ամեն բան լավ ա, համա մեր պապական աղաթը բանդվում ա, հավատից ու կրոնից հեռանում ենք:

— Պապական աղաթը մեր պապերն իրենց համար պինդ պահեցին ու հետները գերեզման տարան. ուզում ես, գնա գերեզմանից հանի. թե մեռելը կապառա, աղաթն ել հետը... Սրան սոցիալիզմը կասեն:

— Բան չեմ ասում ախպեր, ձեռ քաշի:

— Հա. ել բռնեց բան չասես, լեզուդ պոնգովդ չունես:

— Կրակ ա, ելի, ձեզ հետ խոսալը...

— Ձե... ականջս քթիդ տակ դնեմ, մեջը հազար ու մի սարսաղությունով լցնես, վոր լավ ըլի, քու ուզածն ըլի...

Գնա փրանցուղի ու ինգլիզի պարտքը տուր, վոնց վոր Կարմրավիղ Սրտեմն ա ասում... Ի՞նչ եք մի քանի հոգի աշունքվա ճանճի պես աղտոզում...

Խոսակիցը հեռացավ քոռ-փոշման, իրեն-իրեն փընթփնթալով. — «սովետական իշխանությունը ամեն մի գյաղի բերնում հենց լեզու յա դրել, վոր հետները մեզմ դրից ել չի արվում»...

— Համա կարկատեցիր, հա...

— Բա վոնց գիդա... Սաղ գեղը համարյա կոլլեկտիվի մեջ ա մտել, պրծել, ես մի քանի հոգին խալխի միտքը պղտորում են...

— Ասում են Սրտեմն ել ա դիմում ավել, վոր կոլխող մտնի, խելքդ ի՞նչ ա կտրում...

— Լավ կանի. կնկա հունարը կըլի. կնիկը մեզ հետ ա...

— Բա վոր մտնի ու... ներսից ուղի խանգարի...

— Քոռ ե՞նք... հալա թող փորձի...

— Ի՞նչ կանեք...

— Սոցիալիզմի ական տակը գցենք, ջանը կհանենք... Ով վոր կոլլեկտիվի գործը խանգարի, կամ ուզենա խանգարի, կուղարկենք իրան պապի ծոցը... Սրան — սոցիալիզմի կառուցում կասեն, հանաք բան չգիտենաս...

1930 թ., մայիս

Թիֆլիս.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Սահակ բիձեն	3
2. Անիծված հողը	13
3. Նոր տունը	40
4. Ճիկուտ	63





ՀՀ Ազգային գրադարան



NL0332505

27421

9762 70 40964

45

